

ՌՈՒԲԷՆ ԹՎՐՈՒՄԵԱՆ

# ԽՍՏՆՈՒՐԴ

---

ԲԱՆԱՍԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԹՎՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՐԵՎԱՆ 2022





၂၀၁၅

## ԳՂՐՈՒՄ

Արեւն այսօր արդեն խայթող է,  
 Հողի խորքերն է թափանցում,  
 Զով օդը մեղմ ու կազդուրող է.  
 Շուտով կգա նոր արթնացում:  
 Գրչանկար դարձած ծառերը  
 Հետզհետե կթանձրանան,  
 Զրաներկի հյութեղ գույները  
 Կազդարարեն գալուստ գարնան:  
 Ահա՛, եկա՛վ. անցա՛վ ձմեռը:  
 Հոգում՝ բերկրանք անորսալի.  
 Ինչ-որ մի բան արդեն փոխվել է,  
 Ինչ-որ մի բան դեռ կփոխվի:  
 Եւ կորոտա ցասմամբ երկինքը,  
 Շանթեր արդար կճաճանչեն,  
 Բյուրեղ ջրի բյուր-բյուր շիթերը  
 Մաքրող հոսքի կվերածվեն:  
 Սառույցը կլցնեն գետերը,  
 Եւ ցուրտը կկորչի հեռվում,  
 Ու կտիրեն միայն Արեւը,  
 Անվերջ երկինք ու ջերմություն:



Բողոքեցիք ձմռան ցրտին,  
 Ահա ձեզ ամառվա շոգերը,  
 Երբ որ անգամ սպասված քամին,  
 Ձի գովացնում այրվող թոքերը:  
 Մրեց գարնան գույներն ամառը.  
 Փոշի ու տոթ ամենուրեք,  
 Վառվել է խոտը, Վարդավառ է.  
 Գուցե ջրով հիմա փրկվեք:  
 Եւ միայն միտքը, որ մի օր էլ  
 Կրկին պիտի դողաք ցրտից,  
 Ստիպում է նախընտրել այս օրը,  
 Չտրտնջալ խեղդող տապից:  
 Սակայն ժամից առաջ ընկած  
 Ինչ-որ տերեւ արդեն դեղնում է,  
 Կարծես այդ մեկը վախենում է,  
 Թե կմնա ճյուղին գամված:  
 Իհարկե՝ ոչ. եւ ճիշտ կարգով  
 Կանցնի ամենը իր հունով,  
 Եւ կհասնի ամեն տարվա  
 Տխուր ավարտը ամառվա:

## ԼՇՈՒՄ

Բնչ տխրություն. ցնծանք է շուրջը  
Ու պապանձված պահում ես շունչը:  
Այրվեց գարնան հյուսիսը կանաչը.  
Դրա մոխիրն է այս հրաշքը:  
Որքան կանաչն այդ սիրտ հուզեց,  
Երբ որ գարնանը հայտնվեց:  
Ոչինչ, որ այն արդեն չկա,  
Ոչինչ, որ սա էլ կգնա:  
Կանցնեն կարմիրը ու դեղինը,  
Կանցնեն բոսորը ու դարչինը,  
Կտան գույներն իրենց՝ գետնին,  
Կվերածվեն գորգի նրբին՝  
Փափուկ, պայծառ ու բուրավետ,  
Հետո էլ կլուծվեն անհետ,  
Խոնավ հողում մինչև գարուն,  
Մինչև նոր կյանք ու նոր ցնծում:  
Բայց դա՛ հետո: Իսկ հենց հիմա,  
Դեռ աչքն անթարթ կհիանա,  
Հոգին դեռ բույրը կշնչի,  
Մինչև ձմեռն անցնի գործի:

## ՉՄԵՌ

Վերջն էր աշնան, օր առ օր  
 Զմեռ կիջներ սարից ձոր  
 Ու կհասներ դաշտերին,  
 Սեւ-սեւ վարած հանդերին:  
 Ծանրամարմին քուլաներ  
 Գյուղի վերեւ կկախեր  
 Ու կմրցեր սաստկացած  
 Կրակի հետ վախեցած:  
 Ու կոռնար գազազած՝  
 Դըրսի դռնից կիսաբաց  
 Ու իր շնչով ահարկու  
 Զյուն կգիզեր մութ բակում:  
 Լուսադեմին կլուեր,  
 Հոգնած՝ հոգոց կքաշեր,  
 Ու խաղաղված, ապակուն  
 Նախշ կգծեր զարդարուն:  
 Խորհրդավոր լռություն  
 Կհաստատեր աշխարհում.  
 Սառը արեւ, կապույտ ստվեր՝  
 Կախարդական մի պատկեր:

## ՕՐՎԸ ՊԼՔԵՐԸ

Զով է, ցող է, առավոտ է,  
Թափանցիկ, բյուրեղ է օդը,  
Լռությունն է դեռ իշխում:  
Նոր ցոլաց արփու ճաճանչը  
Բայց արդեն բզզում է ճանճը,  
Զրնգում քամու դողանչը,  
Եւ օդում անհետ լուծվում:

Կարթնանան ննջած ձայները,  
Կըեռան օրվա գործերը,  
Կկախվի օդում փողին:  
Կկորչեն հեռու լեռները,  
Կարճացած անզոր ստվերները,  
Եւ արդեն հոգնած ժամերը,  
Կհասնեն օրվա կեսին:

Ճլ ավել կայրի արեւը  
Ձի փրկի նույնիսկ անձրեւը  
Կշաղի ու կկորչի:  
Ու կրկին հոսում է օդը,  
Եւ անզուսպ խեղդում է տոթը.  
Գիշերվա զովի կարոտը,  
Շատ երկար դեռ կտանջի:

Զովությունը դեռ հեռու է,  
Օդը չոր է ու մոռ է,  
Արեւմուտքն է դեռ շիկնում:  
Բայց, ահա, դանդաղ մթնում է.  
Կեսգիշեր է, հովն իջնում է,  
Եւ աշխարհը համրանում է,  
Նոր օրվա հոգսով քնում:



## ՆՈՐ ՏՂԻԻ

Կրկին եկավ երեսունմեկը:  
 Կրկին կյանքից հեռացավ մեկը՝  
 Հիվանդ հոգնած մի հին տարի:  
 Աստված նրան թող ողորմի  
 Եւ հիշատակը վառ պահի:  
 Հոսում է, փրփրում գինի,  
 Ծնվում է նոր մանուկ տարի.  
 Թող երջանիկ լինի, բարի:

Մինչ կտոնեն ծնունդը այդ,  
 Մանկիկը կքնի անդարդ  
 Եւ նա Հունվար ամսվա վերջին  
 Կասի բառերն իր առաջին:  
 Փետրվար, Մարտ ամիսներին  
 Կանգնած է դեռ կյանքի շեմին:  
 Երջանկություն կանկնկալի  
 Նա արեւից ջերմ ապրիլի:  
 Սակայն Ապրիլ, Մայիս, Հունիս՝  
 Իր երազածը չեն տալիս,  
 Իսկ Հուլիսին, Օգոստոսին,  
 Նա ճանաչում է կյանքը սին,  
 Մնում է չորս տխուր ամիս,  
 Երբ էլ ապրելն էլ չի գալիս:  
 Սակայն քանի դեռ կան օրեր,  
 Կան նաեւ քիչ թե շատ հույսեր,  
 Եւ սպասումներ. ոչ այս կյանքից,  
 Այլ դեռ գալիք իր ժառանգից:  
 Անցան արդեն եւ Սեպտեմբեր,  
 Եւ Հոկտեմբեր, եւ Նոյեմբեր:  
 Վերջին ամիսն է. Դեկտեմբեր...

Կրկին եկավ երեսունմեկը...

## ՔՈ ԵՆՈՒՆԴԷ ՇՆՈՐՀԱՎՈՐ

Կյանքի երկարող փուլերը

Չկայիր դու աշխարհում  
Մուժն էր քեզ շրջապատում:  
Դու ծնվել էս,  
Հայտնվել էս,  
Եւ ուրախ ենք մենք այսօր:  
Քո ծնունդը շնորհավոր:

Տասներկու ամիս առաջ  
Դու եկար աշխարհը այս:  
Դու բալիկ էս,  
Սիրունիկ էս,  
Քեզ ասում ենք մենք օրոր:  
Քո ծնունդը շնորհավոր:

Անցավ էս մեկ տարի  
Աստված ճամփադ հարդարի  
Թոթովում էս,  
Թռչկոտում էս,  
Ամեն բոպե, ամեն օր:  
Քո ծնունդը շնորհավոր:

Արդեն ճիշտ երեք տարի  
Քոնն է լույսը աշխարհի  
Դու խոսում էս,  
Դու ասում էս,  
Քո հարցերն արտասովոր:  
Քո ծնունդը շնորհավոր:

Դու դարձար հինգ տարեկան  
Դու դարձար դպրոցական:  
Դու երգում էս,  
Դու պարում էս,  
Ու ասում ոտանավոր:  
Քո ծնունդը շնորհավոր:

Դու դարձար ութ տարեկան  
 Անցան տարիք մանկական:  
     Դու կարդում էս,  
     Դու հաշվում էս,  
 Դպրոց գնում ամեն օր:  
 Քո ծնունդը շնորհավոր:

Տասներեք տարի արդեն  
 Դու կաճես արագորեն:  
     Գեղանի էս,  
     Պատանի էս,  
 Մեծանում էս օր առ օր:  
 Քո ծնունդը շնորհավոր:

Դու արդեն քսանմեկ տարի  
 Հույսն էս քո ծնողների:  
     Դու արի էս,  
     Պարմանի էս,  
 Դու հպարտ էս ու հզոր:  
 Քո ծնունդը շնորհավոր:

Դու դարձար երեսունչորս,  
 Ունես արդեն կյանքի փորձ:  
     Դու հասուն էս,  
     Դու բեղուն էս,  
 Դու ուժեղ էս, զորավոր:  
 Քո ծնունդը շնորհավոր:

Հիսուն հինգ էս դու արդեն  
 Քեզ որպես վարպետ գիտեն  
     Դու գիտուն էս,  
     Իմաստուն էս,  
 Փորձառու էս, ալեւոր:  
 Քո ծնունդը շնորհավոր:

Ութսուն ինը տարեկան...  
 Մի՞թե մեծ էս դու այդքան:  
     Մեր հայրիկն էս,  
     Մեր պապիկ էս,  
 Տա Աստված դեռ շատ քեզ օր:  
 Քո ծնունդը շնորհավոր...

## ՅՈՒԲԵՆԻ ՍՈՒԵՏԸ

*Как лист увядший падает на душу...*

Аркадий и Борис Стругацкие

Ինչպես թռչնած տերեւ հոգուն իջնում է  
 Անցած տարվա կարոտը անամոք,  
 Անցավ այս մեկն էլ, մյուսը մոտենում է.  
 Ինչ կա այնտեղ, եւ կա՞ մի հույս արդյոք:  
 Բայց ո՞րն է մեր ուզածն ու երազածը,  
 Այդ ինչ հրաշք ենք մենք ակնկալում:  
 Ինչո՞վ չի գոհացնում արդեն եղածը,  
 Ինչո՞ւ ենք ավելին միշտ ցանկանում:  
 Գուցե եւ լավ է, որ մնաց կարոտը,  
 Որ ջերմությամբ ենք հինը հիշելու:  
 Թող նոր տարին անցնի ինչպես նախորդը,  
 Եւ նոր աշնանը չենք տրտնջալու:  
 Թող գա այն եւ հոսի, խաղաղ անցնի...  
 Թռչնած տերեւ հոգուն կրկին իջնի...

## ԻՆՉ ՈՐ ԿԱՐՈՒՄ

Ինչ-որ դարում ապրել էր մեկը,  
 Մյուսները՝ այլ ինչ-որ դարում,  
 Ինչ-որ դարում ապրել ենք մենք էլ.  
 Ինչպես կասեն ապագայում:  
 Որքան շնչին է ժամանակը  
 Մեծ Տիգրանի ու մեր միջեւ.  
 Ինչ-որ երկու հազարամյակ է  
 Այն օրերից՝ ՀՀ մինչեւ:  
 Իրոք, երկու հազարը ինչ է  
 Հարյուր հազար տարվա կողքին:  
 Հազար դարի: Բայց դա էլ քիչ է,  
 Քան միլիոն, կամ ավելին:  
 Որոնք սակայն նույնպես հոսել են  
 Կամ կհոսեն, կանցնեն իսկույն,  
 Եւ մի կեսում արդեն ձուլվել են  
 Նախամարդիկ, շումեր եւ հույն:

## ՅՈՒՄՆ ՈՒ ՄՈՒԹ

Շուտով կրկին պիտի սպասենք գարնանը,  
Անիրական են թվալու կրկին  
Հոսող ասֆալտն, անձրեւն ու ծիածանը,  
Լազուր երկինքը ու կանաչ այգին:

Շուտով կրկին պիտի հաշվենք օրերը.  
Ոգետրված ջերմացումով չնչին  
Պիտի կարծենք, թե վերջ, բեկվեց ձմեռը,  
Եւ համոզվենք, որ խաբվեցինք կրկին:

Բայց կտեսնենք՝ օրըստօրե անցնում է  
Ու նահանջում է ցուրտը աշխարհի:  
Ինչ ցուրտ լինի, միեւնույն է, հեռանում է...  
Թեեւ կրկին շոգին կհետեւի...

\* \* \*

Քաղաքով ցուրտ Մարտափն է քալում:  
Մարած են բոլոր լապտերները,  
Եւ լուռ են դատարկ փողոցները:  
Քաղաքով ցուրտ Մարտափն է քալում:  
Սովի ուրվականն է շրջում,  
Դողում են դատարկ, գոց սրտերը.  
Քաղաքով ցուրտ Մարտափն է քալում,  
Մարած են բոլոր լապտերները:

## ՎԵՐՉԻՆ ԱՆԳԱՄ

Դա կլինի վերջին անգամ:  
Եւ կարեւոր չէ, թե հենց ինչը.  
Գուցե համբույր, գուցե պատգամ,  
Գուցե այսինչը, կամ այնինչը:

Գուցե վերջին ընկնող տերեւ,  
Շփոթություն, կասկած. թեւ,  
Մի կայծ վերջին, վերջին արեւ:  
Գուցե, այո, ծեծված բարեւ:

Կամ բանաստեղծը կշրջի,  
Տանջված տետրում վերջին իր էջը,  
Եւ կայցելի մի միտք վերջին  
Ու վերջապէս կգա անվերջը...



\* \* \*

Գիտե՛ր, գալու է.  
Ահա եւ եկավ...  
Եւ որ անցնելու է.  
Ահա եւ անցավ:

Անցավ, ինչ սկսվել էր,  
Անցավ, ինչ բացվեց,  
Անցավ, ինչ ամբողջ մի աշխարհ ներառեց:  
Խամբում են գույները,  
Հարթվում ել եւ եջ...  
Բայց սկիզբ կունենա, ինչն այսօր ունի վերջ...

## ՇՊԻԺՆԿՎՐ

Ոչինչ, ոչինչ չի վերանում,  
 Ոչինչ, ոչինչ նոր չի ստեղծվում.  
 Եղել է միշտ, միշտ կլինի,  
 Զի մահանա ու չի ծնվի:  
 Եւ ժապավենը Մայր Նյուլթի  
 Ամեն մի դեպք իր մեջ ունի:  
 Եւ այդ դեպքերը անդադար՝  
 Կազմած հսկա շարժանկար  
 Անվերջ շարժվում են նույն հունով  
 Եւ միշտ լինում են նույն կարգով:  
 Այդ մեզ համար՝ այստեղ, այսօր,  
 Ուր կյանքն է մեր հանապազոր,  
 Կան ծնունդներ ու վախճաններ,  
 Եւ շգիտենք, կյանքում այդ մեր  
 Շարժապատկեր գալիք էջում  
 Ի՞նչ նոր դեպքեր են մեզ սպասում:  
 Նոր՝ մեզ համար, ոչ Ուժերի,  
 Որ տեր են Մեծ Ժամանակի:  
 Այդ դեպքերին, եթե ուզենք,  
 Մենք ապրելով պիտի հասնենք:  
 Մինչդեռ դրանք հիմա էլ կան  
 Եւ ընթանում են անպայման,  
 Եւ այս պահին, անսկիզբ պահին  
 Տիեզերական մեծ վահանին,  
 Շարժանկարն այդ վեհալից  
 Դիտում են Դիք իրենց Գահից:  
 Ինչ-որ մի տեղ մովթ խորքերից  
 Արեւն է մեր հանդես գալիս,

Ապա՝ Երկիրն այս՝ տունը մեր  
 Որպես նրա փոքրիկ ընկեր:  
 Մի տեղ բույսերն են հայտնվում,  
 Կենդանիներ, մարդիկ մտնում  
 Այդ գալարված թատերաբեմ,  
 Որ պատմությանը մասնակցեն:  
 Նյութի հեռու գալարներում  
 Դավիթն է Մելիքին զարկում,  
 Պարիսն ուղղում է նեսն ուժգին,  
 Աքիլլեսի գարշապարին:  
 Խորհրդավոր Զատիկի կղզում  
 Կուռքեր են մեծադիր կերտում:  
 Հայտնագործում են Նոր Աշխարհ,  
 Արգարություն փնտրում անշահ՝  
 Հին Աշխարհի տարածքներում,  
 Ապա՝ հաղթում, կրկին պարտվում,  
 Եւ քարանում հիասթափված...  
 Սակայն Մայր Նյութը գալարված  
 Պահում է վեպը աշխարհի,  
 Ստեղծված մտքով Մեծ Հանճարի:  
 Եւ օղակվող գալարներում,  
 Ժամանակներ են հանդիպում:  
 Զկա եւ սկիզբ, չկա եւ վերջ,  
 Զկա գրո, չկա անվերջ.  
 Գաղափարով մի հոյակապ  
 Սոսկ մի պատկեր է բազմաչափ,  
 Որ երազում ենք պահ գետ մի,  
 Դիտել աչքով մեր կենդանի:

\* \* \*

*Ինչո՞ւ ես թողնում, որ ժամերը վայրի  
Անցնեն քո կողքով ու կորչեն հավիտյան:  
Որսա՛ դու նրանց ու դարձրո՛ւ ընտանի,  
Թող քեզ ծառայեն է՛լ բոպե, է՛լ վայրկյան:*

\* \* \*

Թե աչքիդ աշխարհն անխախտ է,  
Նույնն է օրն այս ինչ երեկ,  
Նույնն է, կաթը, նույն է վարդը,  
Պատանի ես իմ ընկեր:

Թե թվաց մի բան փոխվել է,  
Զգեստդ, տունդ, կամ այգին,  
Օրն այս անցածից տարբեր է,  
Մեծացել ես, իմ անգին:

Թե արդեն շատ բան ուրիշ է,  
Եւ արագ կփոփոխվի,  
Զգում ես, որ ինչ նոր է՝ ճիշտ չէ,  
Ծերացել ես երեւի:

Իսկ եթե ամեն ինչ այլ է,  
Էլ ոչինչ չես ճանաչում,  
Եւ ամեն ինչ քեզ օտար է,  
Ավելորդ ես աշխարհում:



---

File

# ԳԻՆԻ

Կա խոսք. «Գինով կուտվի»:

«Կուտվի»...

Կոպիտ է բառը.

Նոր համ ձեռք կբերի անց, ինչ համից տկար է:

Աշխարհ նոր կբացվի եւ ապրելու իմաստը,

Ճշմարտությամբ ամբողջ, որ գինու մեջ լուծված է:

Գինի: Նրբին հեղուկ եւ քաղցրաշունչ թմբիր:

Լինես սպիտակ, դեղին, թե վարդագույն, կարմիր՝

Քեզ գովերգել են միշտ ու քեզանով արբել են,

Քո ոգեղեն աչքով այս աշխարհին նայել են:

Երգվել, ձոնել, օհրնել են, բազիններին գեղել ,

Ուրախությունն ու սուքն են քեզ հետ դիմավորել:

Քեզ ներբողեց իսպամը, փառաբանեց Հոմերը

Եւ որպես իր արյուն ներկայացրեց քեզ Տերը:



## ՏԱՂԻՊ

Դու հեռանում ես, եւ աշխարհն այս գունագեղ  
Իմ աչքերում խամրում է ու մթնում:

Կյանքի լույսերը ողջ դու հետդ ես տանում,  
Զթողնելով ինձ գեթ հույսի կանթեղ:

Դու հեռանում ես քայլերով հաստատակամ  
Եւ հիանում կամքի ուժով քո անկոտրում,  
Իսկ ինձ մնում են գիշերներ միայն անքուն,  
Միայն հուշեր ու երազներ անիրական:

Մի՛ հեռացիր,

գոնե մի պահ էլ թող զմայլվեմ քեզնով հիմա:

Ինձ մի՛ լքիր,

կյանքն առանց քեզ անտանելի ինձ կդառնա:

Հոգիդ բացիր

եւ զգա հոգով դու իմ սրտի թրթիռն ու շունչը,

քեզ կարոտած շրթունքներիս կանչող շշուկը.

«Ինձ հասկացիր,

ինձ մի՛ տանջիր,

մի՛ հեռացիր»:

## ՉԱՅԿԱ

Вот чайки лёт, и вниз, и вверх.  
И круто вбок, потом — отвесно.  
И неба синь, и моря бездна,  
И резкий крик, как колкий смех...

Не смейся чайка надо мной.  
Я не свободен это правда,  
И недоступна мне отрада  
Паренья тела над землёй.

Но ты не смейся надо мной:  
Бывает ведь и я летаю,  
Когда, порой, на миром сна я  
Парю с простёртою душой.

И в этом мире, мире сна,  
Для тех, над кем я пролетаю,  
Возможно, небо рассекая,  
Такой же чайкой вижу я.

## ԿՕԼՅՑՕ

В мечтах кольцо блистало гладью, сверкало иглами огней,  
И золотой стекал струёю с него живительный елей.  
И жизнь была такой же гладкой, горела заревом любви  
И счастья обручем сжимала сердца с зари и до зари.

Но вот подогнано по пальцу, в тисках расплющено оно,  
И жизни прессом многогранным, безжалостно размозжено.  
И уж померкли иглы злата, поблѣк металл, заря спала,  
И ныне уж кольцо пылится, в забытом ящике стола.

Ի-ԻՆ

Վարդ անուշիկ,  
 կարմիր թուշիկ,  
 Իմ խորոտիկ, նագելի,  
 Զարդ աննման,  
 սիրո դարման,  
 Սրտիս փշոտ բանալի:

Դու ծաղկեցիր,  
 հմայեցիր  
 Կերպարանքով վարդերես,  
 Ու կարծեցի՝  
 սլխավեցի,  
 Թե միշտ ինձ հետ կլինես:

Արեւ մտավ,  
 օրը հատավ,  
 Փորձանք եկավ իմ գլխին.  
 Անձրեւ արեց,  
 սիրտս լացեց՝  
 Քեզ չգտա իմ կողքին:

Ու ապշեցի,  
 ու տրտմեցի,  
 Եւ ուժ չկար փնտրելու,  
 Ու մնացի,  
 դարդից բացի,  
 Գորշ մենությամբ սնվելու:

## ԼՅԼԿ

Անցավ: Եւ այժմ նա օտար է:  
 Ինչպէս բոլորն աչքիցդ դուրս:  
 Ճաշակեցիր գավաթն այդ դառը  
 Քո բթութչան ձեռից անհույս:

Դուք ինչպէս միշտ տեսնվելու եք,  
 Բայց ձեր միջեւ արդեն անգուծ  
 Եւ աներեր հայտնվելու է  
 Մի ցուրտ պատնէշ աներեւոյթ:

Եւ կանիծես այդ նենգ պատնէշը,  
 Եւ ինչպէս ճանճը՝ ապարդյուն,  
 Մինչ արնաքամ, մինչ կյանքիդ վերջը  
 Կզարկըվես դու ապակուն:



Մուժ է, իմ փոքրիկս,  
քեզ ասեմ՝ օրոր,  
վաղը, անուշիկս,  
կբացվի նոր օր:

Թող քեզ Արեգակը  
միշտ լուսավորի,  
իսկ այսօր Լուսնակը  
քեզ երազ բերի:

Դու փակիր աչիկդ,  
դու հանգիստ քնի.  
Ես, այստեղ, կողքիդ եմ՝  
ինչ էլ որ լինի:

Թող քեզնից մրրիկը  
միշտ հեռու մնա,  
եւ մեղմիկ հովիկը  
քեզ ընկեր դառնա:

Իսկ հիմա, փոքրիկս,  
քեզ ասեմ՝ օրոր,  
վաղը, անուշիկս,  
կբացվի նոր օր:

\* \* \*

Ես կտխրեմ մենակ,  
Ես կլացեմ անձայն,  
Իսկ դու խնդա անհագ,  
Իսկ դու ժպտա միայն:

Գուցե հարցնես. ինչո՞ւ,  
Գուցե եւ լուռ մնաս,  
Քեզ կպահեմ շնչում,  
Քեզ կմնամ անհաս:

## ՎԵՑ ԲՆԱՐԵՐԳԻՏՅԱԿ ԴՆԱԿՆԵՐԻ

Ժողովածուն այս ծաղկաբաղ է քնարերգչական գանձարանի,  
Ուր շարվեցին բանաստեղծները ըստ ծննդյան թվականի:  
Նրանք, ովքեր ծնվել, ապրել են, այս աշխարհով ոգեշնչվել,  
Եւ իրենց այդ ոգու հրում էլ, այրվել իսպառ ու մոխրացել:

Բայց թե որ չի սպառվել դեռեւս կրակն իրենց հոգիների,  
Եւ հնօրյա փրկված տողերը պահում են հուրը սրտերի,  
Դու շոշափիր դրանց թրթիռը, հոգու խոհերը ընկալիր  
Եւ հուրն ու մուրը, գեշն ու գեղը եւ շարն ու բարը ըմբռնիր:



## SINFONIA CONCERTANTE

Ես քեզ կասեմ,  
 Սիրում եմ քեզ,  
 Բայց դու, գիտեմ,  
 Ինձ կմերժես,  
 Եւ որ մերժումն այդ չլսեմ  
                                           Եւ չկորչեմ,  
                                           չկործանվեմ,  
                                           Ես կլռեմ:

Բայց թե ասես, որ ինձ անշափ, անշափ սիրում ես,  
 Քեզ չեմ մերժի, քանզի հավերժ դու իմ սրտում ես,  
 Սակայն ավաղ, պիտի կարծես որ կմերժեմ եւ չես ասի,  
 Դու ինձ ոչինչ էլ չես ասի,  
 Եւ սիրտդ քո դու չես բացի:

Բայց շուտ թե ուշ  
 Պիտի հնչի սիրո գաղտնիքը,  
 Անփույթ, թե զգույշ  
 Պիտի բացվենք, պիտի ասենք մեր ասելիքը:  
 Պիտի խոսենք, քանզի լռելն արդեն հանցանք է,  
 Եւ մենք գիտենք, որ մեզ արդեն վաղուց կապել է կյանքը:

Եւ ես կասեմ,  
 Սիրում եմ քեզ,  
 Եւ դու կասես,  
 Որ դու նույնպես...

## ՏՎՈՒԿԱՐԸ

Եւ չըք-չըք-չըք շխկում է գառը,  
Նորից աշխուժ է տաղավարը:  
Նորից ամռան զով երեկոն է  
Հաղթեց կրկին քեռի կեռոնը...

Կուզես էլի: Միակն է հարցը.  
Ի՞նչ է էս մեկն. օին, թե՛ մարս է:  
Եւ չըք-չըք-չըք շխկում է գառը,  
Նորից աշխուժ է տաղավարը:

## ԽՂՉՄԵՐՈՒԿԻՆ

Ճեպանկար

Երեկոյան Երեւան,  
 Կոմիտասով՝ Մերգեյան,  
 Լուսացույցի վառ կարմիր,  
 Լարից կախված ազդագիր:  
 Ներսում՝ տաք է, վառարան,  
 Ֆորշի խոպոտ «Կառապան...»:  
 Դրսում՝ քամի, տերեւներ,  
 Ապակով վազող շիթեր,  
 Մաքրիչների տատանում՝  
 Հղկած շրջան ապակուն,  
 Մայրամուտից շիկացած  
 Ամպեր՝ Պարին սոսնձված:  
 Հովանոցներ ձեռքերին  
 Դանդաղ անցնող մարդ ու կին...  
 Անհամբեր ազդանշան՝  
 Մերգեյանով՝ Բաղրամյան...



ጊዜያዊ ስም ለግንባታ

## ՀԱՅԱԿԵՆՏՐՈՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստան. աշխարհի կենտրոնում ես.  
Հավասար են հեռու քեզանից  
Նորվեգյան լեռների ցուրտ անհունը  
Եւ Օմանը՝ տապով իր կիզիչ:

Հասկացել են այդ փաստը բոլորը,  
Երբ ուզել են աշխարհը տիրել.  
Այն, որ նախ եւ առաջ կարեւորն է  
Հենց կենտրոնն աշխարհի գրավել:

Հասկացել են դա հույներ, մոնղոլը,  
Հասկացել են թուրքեր ու ռուսներ,  
Հասկացել են Թեմուրն ու Սարգոնը,  
Եւ լոկ դու ես, որ չես հասկացել:

Տես. մինչ օրս, ահա, գրոհում են  
Քո հողերն իրարից են խլում  
Քեզ ասում են, իբրեւ թե օգնում են  
Մինչդեռ դու ոտքի տակ ես ընկնում:

Բայց շատ քաղցր է կենտրոնը: Այդպես էլ  
Օտարները միմյանց չեն հաղթի,  
Աշխարհի սուրբ կենտրոնը երբեք էլ  
Որեւէ մի զավթիչ չի մարսի:

Եւ այդպես էլ իրար գզելու են,  
Մինչեւ օրը գա, երբ հասկանան,  
Որ այս սուրբ երկրի տերը գալու է՝  
Արդար տերը միակ՝ հայ Արքան:

Որ հենց դա է արդար ճանապարհը.  
Միշտ լինել հպատակ Արքային,  
Երբ Արքան իր հերթին էլ հպարտ է,  
Ծառայել իր հպատակներին:

Կլինի բոլորինը Դրախտը.  
Եւ զավթել այն կարիք չի լինի:  
Ինչ, ազանճ են, կարծում են անհանդիմ են:  
Այս պայքարը երբեք չի հատնի:

## ՇՐՏԷՔ Բ ԲԱՐՏԵՂՆԵՐԸ

Հյուսիս են ուղղված քարտեզները,  
Այն կողմ, ուր ցրտեր են անհույս:  
Նայում անվերջ ձեր աչքերը,  
Այն կողմ, ուր չկա լույս ու հույզ:

Շրջեք պատերի քարտեզները,  
Շրջեք քարտեզները հոգու,  
Այն կողմ, ուր իշխում է արեւը,  
Այն կողմ, ուր թռիչքն է ոգու:

Թողեք անվարան թիկունքում ձեր  
հավարն ու բեւեռը Արջի,  
Ուր ցավը շունի ամոքում եւ  
Նայեք դեպ բեւեռը հաշի:

Ուր միշտ կճախրեն արծիվները,  
Եւ միշտ դեպի լույսը՝ դատի,  
Գալիս են խավարը ու ստվերը:  
Շրջեք քարտեզները պատի:



## ՄԻՆՉ ՊԼԵԼ ԼՅՆ...

Մինչ պահը այն, երբ հայ զինվորը  
Մտնի Կարին, Բիթլիս ու Վան,  
Հայոց մտքի անխոնջ բանվորը  
Պիտի վերցրած լինի Մոսկվան:

Մինչև հայոց զենքի կրողը  
Մտնի Այաս, մտնի Տարսոն  
Հայոց լրտեսն ու լրագրողը  
Պիտի մտած լինեն Լոնդոն:

Ոնց այլք մտան այլոց գրպանը  
Մինչ հայրենիքը սրբազան,  
Այդպես էլ հայ առեւտրականը  
Պիտի մտնի Նյու-Յորք՝ բորսան:

Պիտի ձգտես վերցնել բոլորը,  
Որ տեր մնաս քո իսկ երկրում,  
Բայց չես կարող սկսել գրոհը,  
Թե դաշտը չես վերահսկում:

# ՎԵՑ ՇՐՋԱՆ

Վեց շրջան ու մի Շուշի.  
Կովը չի փոխի կաշի,  
Լինի կարմիր, դարչնագույն,  
Եւ կամ նույնիսկ՝ երկնագույն:

Իրենց ոչ ոք չհուշի,  
Սխալ չըմատնանշի.  
Ռազմագետ են, բանիմաց,  
Եւ անշուշտ՝ շրջահայաց:

Պետք չէ անգամ սպառազեն.  
Խաղաղություն կկնքեն  
Եւ թուրքերն ու վրացիք  
Կտան ուղի տարանցիկ,

Ու մետաքսի նոր ուղով,  
Աղով, հացով ու յուղով,  
Հայաստանը կհառնի,  
Առանց այդ վեց շրջանի:

Հիշեք նաեւ, որ կա ՄԱԿ,  
Որ այն չի շրջի քամակ  
Եւ գործով բաժանարար  
Կպաշտպանի անդադար:

Կա, վերջապես, Ռուսաստան.  
Կողմերին կտա այնքան  
Հրասայլ եւ ուղղաթիռ՝  
Որ պահվի հաշվեկշիռ:

Վեց շրջան ու մի Շուշի.  
Սա է գինն իրենց խաշի,  
Յուղոտ քիթը թարմ գոշի,  
Խմելիքն իրենց շշի:

Թե որ բախտը չքաշի...

\* \* \*

Եղեռնը՝ սոսկ փաստաթղթեր չեն,  
Դա Հայրենիք է կորսված:  
Եղեռնը սոսկ մարած կյանքեր չեն,  
Տառապանքի ճանապարհներ չեն.  
Դա հողն է մեր ազգից խլված:

Մարում է ազգն առանց հողի եւ,  
Լեզուն մարում է չխոսված:  
Հիշենք, որ թուղթը սոսկ մոխիր է,  
Հիշենք միշտ իրական խնդիրը,  
Որ շմանք հավերժ խաբված:

## ԸՄՆԵԼ

Տեսնել Անին ու նոր՝ մեռնել.  
 Դա բանաստեղծն է երագել:  
 Իսկ ի՞նչ երգենք Շուշվա մասին,  
 Դարձած այսօր հաջորդ Անին:

Այո, տեսել ենք մենք Շուշին,  
 Իսկ ի՞նչ ասենք նոր սերնդին.  
 Որ սովորո՞ւյ՞թ ենք մենք դարձրել.  
 Հողեր կորցնել, հետո՞ լացել.  
 «Կուզեմ տեսնել ու նոր՝ մեռնել»:

Գուցե հենց դա է բանալին,  
 Որ չենք նայում ապագային:  
 Ձենք հասկանում, որ ապագան,  
 Դարեր հետո պիտի դեռ կգա:

Բայց որ լինի մեր ուզածով,  
 Պիտի կերտենք այն դարերով:  
 Ամեն մի օր, ամեն տարի՝  
 Պիտի շարժվենք ըստ ծրագրի:

Ձասենք. «Կուզեմ տեսնել Անին»,  
 (Կամ Մուշը, Վանը, կամ՝ Շուշին):  
 Պիտի շուգենք տեսնել հիմա.  
 Պիտի մեր սիրտը դիմանա:

Կգա մի օր, պայծառ մի օր,  
 Երբ Հայրենիքը մեր բոլոր  
 Կլինի մերը վերստին՝  
 Կարինը, Վանը ու Անին,  
 Եւ անկասկած՝ նաեւ Շուշին:

Դա կլինի, եթե այսօր  
 Դեպի դարերը հեռավոր  
 Արահետներ մենք որոնենք,  
 Եթե հաղթենք աշխարհը նենգ.  
 Ոչ թե խնդրենք, այլ կարգադրենք:

Ինչպե՞ս է պետք դրան հասնել:  
 Խնդիր է: Պետք է այն լուծել:  
 Բայց անհրաժեշտ է գիտակցել,  
 Որ դա է այն միակ ուղին,  
 Որ կտանի մեզ դեպ Անին:

Նույնիսկ եթե հանկարծ կրկին  
 Մեզ սկուտեղով բերեն Շուշին,  
 Պիտի հիշենք, որ դա սակայն,  
 Միայն խաբկանք է հերթական,  
 Ինչպես եղավ նախորդ անգամ:

Մեզ պետք չէ սոսկ բախտի նվեր,  
 Պիտի շարժենք մենք անվեհեր,  
 Օրինաչափ, դարերն ի վեր:  
 Որ նա, ով կհասնի Անի  
 Այնտեղ ապրի, այլ ոչ մեռնի:



ᠮᠤᠯᠠᠭᠤᠯᠤᠰᠤ

---

\* \* \*

«Achtung, achtung...»՝ ամեն առավոտ  
Քաղաքում պարեկներ են շրջում,  
Մեր բերանը փակել պահանջում:  
«Achtung, achtung...»՝ ամեն առավոտ:  
Չափնազուրկը բերան չի բացում:  
Բարձրախոսը անհույզ է, խռպոտ.  
«Achtung, achtung...»՝ ամեն առավոտ:  
Քաղաքում պարեկներ են շրջում:



\* \* \*

Չսարսափես, երբ քո աչքի առաջ  
 Վերջին դպրոցը հայ փակի դռները,  
 Եւ ճոխ, հարուստ բառերը մոռացված  
 Չգարդարեն այլեւ մեր խոսքերը:  
 Չգարմանաս. «Ինչպէս թե, դեռ երեկ  
 Մեր փողոցում զբոսնում էին հայերը»,  
 Իսկ այժմ տես. արդեն գիշեր-ցերեկ  
 Հնչում են անծանոթ լեզվով երգերը:  
 Եւ մեր երկրում ուսմբեր չպայթեցին,  
 Բայց շուրջ բոլոր՝ միայն ավերակներ են,  
 Իսկ ինչ դեռ երեւում է քո աչքին,  
 Դրանք սոսկ անցյալի վերջին ստվերներն են:  
     Քվեարկեցիր դու հենց սրա օգտին,  
     Երբ տրվեցիր օտար քարոզներին:

\* \* \*

ՅՕ3-ի տղերքը շուտ թե ուշ  
Ասպարեզից կհեռանան  
Եւ դիմակներն էլ ստոր-ապուշ  
Ձեր դեմքերից կանհայտանան:

Դե, «ժամանակն էր այդպիսին.  
Այն պարտադրում էր հավատալ՝  
Կմեղադրեք դուք մեկ մյուսին.  
Ու կփորձեք արդարանալ:

Եւ ուժերին «նախկին» արագ  
Նշավակել դուք կսկսեք՝  
Աներեւույթ մի նոր դիմակ  
Երեսներին ձեր կքաշեք:

Բայց ամոթի այս դիմակից  
Ձի հաջողվի ձեզ ազատվել.  
Այն չի ստացվի հանել կյանքից  
Այն խղճի մեջ է ձեր դաշվել:

\* \* \*

Դարձավ ընկերս աշխարհի քաղաքացի  
Այլեւս նա հայի ցավից էլ չի լացի.  
Նա այդ ցավի պահին կզգա իրեն հնդիկ,  
Կամ վրացի, կամ հույն եւ կամ պարսիկ:

Կամ, ի՞նչ պարսիկ՝ Արեւմուտքից շրջափակված.  
Իրեն կզգա գերմանացի նա փառապանծ,  
Կամ Ֆրանսացի, որ աշխարհի հեռու ծայրից  
Իր կարոտից այրված շտապի հասնել Փարիզ:

Իսկ երբ ռուսի թրից ոռնա եւրոպացին,  
Իրեն կզգա նա իսկական ռուսաստանցի:  
Եւ կհեգնի, ինչպես բնիկ մի մոսկվացի.  
«Հայոց լեզուն մինչեւ դարպասն է Զվարթնոցի»:

Բայց իր ծագումը նա երբեք չի վերացնի,  
Եւ այլ մի մայր իրեն հագիվ թե վերածնի:  
Եւ իր մասին կասեն եւ լեհ եւ չինացի.  
«Գիտենք... այն հայն է, աշխարհի քաղաքացի»:

## ԳՈՒՅԵ ՄԻ ՕՐ

Քեզ անհնար է արգելել  
Ընկերային ցանցեր մտնել.  
Կարծում ես տանն ես քո, սակայն  
Աշխարհն է քեզ դիտում համայն:

Հոգիդ ամբողջ պահում ես բաց  
Եւ քեզ ոչինչ էլ չմնաց:  
Չկա մի բան, որ կուտակվի  
Որպես պոռթկում պայթի, աճի:

Գուցե մի օր դու գիտակցես,  
Որ ինքդ քեզ արդեն չունես,  
Որ քո հոգին ես մերկացնում:  
Եւ էջդ կփակես ցանցում:

Գուցե մի օր դու հասկանաս...  
Գոնե պահին, երբ հեռանաս...  
Քո մտքերին դնես կնիք,  
Եւ քո մասին թողնես գաղտնիք...

\* \* \*

Ինչ լավ է քաղքենի լինելը՝  
 Ասեկոսե, փայլեր, հրճվանք...  
 Սրճարանի կյանքով ապրելը՝  
 Անվերջ գրույց, ինքնագովանք...  
 Ինչ լավ է, երբ կուսակցական ես՝  
 Գիտես, ինչո՞ւ է կյանքը վատ,  
 Կամ երբ որ եկեղեցական ես՝  
 Թե ինչն է ճիշտ՝ գիտես հաստատ...  
 Եւ օրենսդիր լինելն էլ վատ չէ՝  
 Օրենքը քոնն է, դու՝ օրենք.  
 Լավ լինելու ձեւերը շատ են.  
 Մեծ ընտրություն կա... Թե ուզենք...

## ՉԳՈՒ ԵՂԵՔ...

*Lidé, měl jsem vás rád. Bděte!*

Julius Fučík

*Զգոն եղեք՝ վերջին պահին ասաց՝  
 Զգոն եղեք մարդիկ, ես ձեզ սիրել եմ:  
 Ինձ արդեն շատ քիչ թույլե մնաց,  
 Ինձ մնում է սոսկ ձեզ զգուշացնելը:*

*Զգոն եղեք, երբ կհաղթեք, նույն իսկ,  
 Զգոն եղեք, նրանք կրկին գալու են:  
 Այլ դիմակ դրած կգան նորից,  
 Այլ ճառով, բայց մեկ է՝ խաբելու են:*

*Խաբելու են ավելի հմուտ,  
 Խաբելու զենքերը հղկվելու են,  
 Լինելու են ավելի անզուրկ,  
 Լինելու են ստոր, բայց պաշտվելու են:*

*Եւ եկան, եւ կրկնվեց ահա,  
 Եւ եկան, երբ կարծեցին անցել է,  
 Անհնար է, հինը ետ դառնա,  
 Անհնար է, ազատին գերելը:*

*Եւ մարդիկ գնում էին գործի,  
 Եւ մարդիկ հարգում էին օրենքը:  
 Իսկ նրանք ծածուկ անցան հունձի,  
 Իսկ նրանք արդեն ամենուրեք են:*

Եւ թվաց, թե չի էլ գգուշացրել,  
Եւ թվաց, թե ճիշտը հակառակն է.  
Եւ դահիճը ինքն է հենց եղել,  
Եւ դահիճը ինքն այդ նահատակն է:

Շրջվեցին անցյալը ու ներկան,  
Շրջվեցին գույները ու բառերը.  
Սենն ու դարչնագույնը տեղ դարձան,  
Սենն ու դարչնագույնն են, արդ, սրբերը:





time

---

\* \* \*

Շտապում եմ ես, ժամերն արագ ցնդում են,  
 Մտքերը կուտակվում են սրընթաց,  
 Ապա հերթով կորչում, անհետանում են,  
 Կամ անօգուտ մնում են լճացած:  
 Մտքերն ու հանգը փոխադարձ հյուսվում են,  
 Բերում է միտքը՝ հանգ, եւ հանգը՝ միտք.  
 Միայն թե հաջողվի որսալ պոռթկումը՝  
 Վայրկյան հետո այն կկորչի ընդմիշտ:  
 Վայրկյան հետո գուցե եւ գա հաջորդը,  
 Գուցե մեկ այլ մի հանգ էլ նշմարվի,  
 Կամ կմնա սոսկ հների ճահճուտը,  
 Կամ ափսոսանք, որ հինն էլ չի հիշվի:  
 Շտապում եմ ես, թե միտքն այս շծլի,  
 Արդյո՞ք պիտի հաջորդը այցելի:

\* \* \*

Ի՞նչ ես, ասա, տառաստե՞ղծ,  
 Ձևանաչված բանաստե՞ղծ,  
 Ճարտարապե՞տ, նկարի՞չ,  
 Դպրոցական ուսուցի՞չ:  
 Կամ էլ գուցե դասախոս  
 Գուցե հրապարակախոս,  
 Գրո՞ղ, կամ էլ լրագրո՞ղ,  
 Կամ գուցե ծրագրավորո՞ղ,  
 Ձեւավորո՞ղ, տպագրո՞ղ,  
 Թարգմանի՞չ, տեղայնացնո՞ղ,  
 Կամ հայագե՞տ, պատմաբան,  
 Թե՞ կենսաբան, երկրաբան:  
 Մարդ չի լինի ամեն ինչ.  
 Դու կամ մեկն ես կամ... ոչինչ...

\* \* \*

Իսկ գուցե ես վերցնեմ գժվեմ,  
Փակվեմ կերտված իմ աշխարհում  
Եւ ճանաչված այնտեղ լինեմ,  
Նաեւ սիրված՝ այնտեղ խորքում:

Եւ անձնուրաց լինեմ եւ սուրբ,  
Լինեմ խիզախ, լինեմ բարի,  
Ի պատասխան ստանամ անզուսպ  
Ողջ հիացմունքն այդ աշխարհի:

Բայց ես կապրեմ էլի անտես,  
Փոքրիկ գործով առօրյայի,  
Կնախընտրեմ դատել այսպես,  
Իմ սթափ խելքով խելագարի:

ԿՈՅՈՒՆ

*Exegi monumentum*

Quintus Horatius Flaccus

Կոթող ես կերտեցի աննյութական.  
 Այն քար չէ, կամ մետաղ ազնվական,  
 Չունի վրան գրեր նա զարդարուն,  
 Այլ ինքն է հենց եւ զարդ, եւ գրություն,  
 Որով կանմահացվեն այլ անուններ,  
 Որով կզարդարվեն այլ կոթողներ:  
 Եւ ուր էլ որ գրանք իրագործվեն,  
 Իմ կոթողի մի մասը կկազմեն:

\* \* \*

Վերջին հոգվածն է, մտածում եմ.  
Էլ չեմ գրի ոչ մի անգամ,  
Հետո կրկին մի բան դրդում է  
Գրել այս մեկն էլ անպայման:

Կրկին կասկած. արդյո՞ք քո գործն է,  
Արդյո՞ք չկա այլ մասնագետ,  
Եւ պատասխան. իհարկե՛քոնն է,  
Հո չե՞ն տպի՝ լինի անպետք:

\*\*\*

Ձեր դրվատանքը ուշանում է,  
 Երբ նոր մի գործ եմ ավարտում,  
 Երբ որ հաստատ եմ ես զգում,  
 Որ ինչ-որ բան ինձ հաջողվում է:  
 Եւ ընկճվում եմ ես, տխրում,  
 Եւ իմ եռանդը ինձ լքում է:  
 Բայց մտածում եմ ես այդփամ,  
 Որ լավ է դա գուցե անգամ,  
 Որ ավելին է ձեր սպասումը,  
 Որ ես առաջ պիտի գնամ:

## ՄԱՐԳԱՐԵ

Ձեմ գուշակում. ես մարգարե եմ.  
 Հաշվարկելու կարիք չունեմ,  
 Ինչ, որ պատմում եմ՝ վերապրել եմ.  
 Ես մարգարե եմ: Ես գիտեմ:

Ես չեմ կարող ձեզ պարտադրել,  
 Ես չեմ կարող ձեզ հմայել,  
 Ես չեմ կարող ձեզ համոզել,  
 Կամ հետքերով իմ ձեզ տանել:  
 Կարող եք ինձ դուր անտեսել:  
 Կարող եք ինչ ուզեք անել:

Ինձ մի՛ հարցրեք, ոնց իմացա:  
 Ոչ-ոչ, Նրան ես չտեսա:  
 Ասեմ, նույնիսկ չլսեցի,  
 Նրա անվամբ չըերդվեցի:

Կարող եք դուր չհավատալ,  
 Կարող եք ինձ վրա խնդալ,  
 Կարող եք եւ արհամարհել,  
 Բայց ի՞նչ կարող է դա փոխել:  
 Ես չեմ կարող ապացուցել.  
 Մնում է ձեզ ինձ վստահել:



Բառերն իրար են սոսնձվում,  
 Ժամանակի կազմում պատկերը  
 Եւ ավազի խառնակույտում  
 Տեսնում եմ գալիքի նախշերը:

Ես ոչ ոքու չեմ վախեցնում,  
 Ես ոչ ոքու չեմ անիծում,  
 Ես ոչ ոքու չեմ հուսադրում.  
 Իրողությունն եմ լուկ ասում:  
 Պետք չէ, քննել կամ ենթադրել.  
 Ձեզ բավական է սոսկ հարցնել:

Տեսնում եմ ապագա դեպքերը,  
 Երկնաքարեր, խավարումներ,  
 Պատերազմներն ու անկումները,  
 Շրջանցելու արահետներ:

Ոչ: Ես գուշակ չեմ մոլագար,  
 Ոչ գիտնական եմ, ոչ հանճար,  
 Ոչ կրոնավոր, ոչ գործարար.  
 Ես քարոզում եմ անվճար:  
 Կարող եք նույնիսկ դուք շահել.  
 Մնում է ինձ միայն... գտնել:

\* \* \*

Նոր օրը բացված է,  
Երազը հիշված է,  
Մնում էլնեղն ու հանձնելը թղթին:  
Թղթերը դրված են,  
Մտքերը գրված են,  
Բայց շեն նմանվում այն շքնաղ երազին:

\* \* \*

Արեւ եմ ամեն ինչ, որ շանխծեն եւ  
Արեւ ամենը, որ շրջայնոյն:  
Նաեւ ձգտել եմ միշտ, որ ինձ շատեն եւ  
Կշտամբանքով անունս շնորհեն:

Այնպես չէ, որ անեծքը վախեցրել է,  
Ու չեմ կարծում, երբեք ինձ չեն ատել.  
Բայց հայնոյված լինելը միշտ վանել է,  
Ես, պարզապես, սիրվելն եմ նախընտրել:



Johns

---

## ՇՐՋԱՆՈՒՄ

Դասագրքից

Եւ ձյունը պտտվում է,  
Փաթիլ-փաթիլ իջնում է,  
Ծառին, գետնին նստում է,  
Ճամփաներին սառչում է,  
    Հալչում դառնում է ջուր,  
    Հոսում-վազում է... ո՛ր...

Ծովերն է նա հոսում,  
Ուր գոլորշիանում է,  
Երկինք է բարձրանում,  
Ապա բյուրեղանում է,  
    Սառչում, դառնում է ձյուն,  
    Ամպեր է գոյացնում...

Եւ ձյունը պտտվում է,  
Փաթիլ-փաթիլ իջնում է...

\* \* \*

Ազգագրական

Անձրեւը կաթել է,  
Զրհորդանը ժանգել է,  
Զրհորդանը ծակել է,  
Շենքի պատը թրջել է,  
Պատի ծեփը պոկել է:  
Վայ լե-լե լե պոկել է,  
Պատի ծեփը թափել է:

Շոշից ձյունը հալել է,  
Զուրն ասֆալտը տարել է,  
Ճամփին փոսը բացել է,  
Զուրը փոսը լցել է,  
Ակը փոսը մտել է,  
Վայ լե-լե լե մտել է,  
Զորս կողմ ջուրը ցփնել է:

## ՃԻՇՆԵԿ

Նախաճաշին՝ ձվածեղ.  
Եւ էժան է եւ՝ համեղ:  
Ընդամենը ձու եւ եղ.  
Վրայից էլ սեւ պղպեղ:

Ճաշին՝ զորեղ կերակուր.  
Քանջար, պանիր ու ապուր՝  
Տանը լինի թե այլուր:  
Ու մի բաժակ՝ սառը ջուր:

Ընթրիքին էլ՝ թանձրավուն,  
Ջրունաճերմակ թարմ մածուն՝  
Մեջը՝ համեմ ու թարխուն,  
Որ կբերի խորը քուն:



\* \* \*

Հեռու մեր Երկրից սեւ ու ցուրտ տիեզերքում  
 Հրատ կարմրավուն մոլորակն է փայլում:  
 Նրան՝ հնագույն խորքերից դարերի  
 Աչքերն են գամվել աստղագետ այրերի:

Մի օր էլ նրա հեռավոր երեսին  
 Անհայտ մուգ գծեր ինչ-որ նկատեցին:  
 Բայց չի հաջողվում հանելուկը լուծել.  
 Ինչպե՞ս են գծերն այդ այնտեղ գոյացել:

Խորհում են ահա գիտակաները ուշիմ.  
 Գուցե մեծ գետե՞ր են հոսել այդտեղ հին,  
 Գուցե Հրատին է բախվել երկնաքար,  
 Գուցե հրաբուխ է ժայթքել շատ վարար:

Գուցե ջրանցքներ են դրանք ահագին՝  
 Փորված Հրատի հեռավոր ցամաքին,  
 Որոնք անցկացրել են մարդիկ այն դարում  
 Երբ կյանք էր եռում այդ հեռու աշխարհում:

Բայց մի գուցե կա դրա այլ մի պատճառ.  
 Եւ ո՞չ հրաբուխ է, եւ ո՞չ երկնաքար,  
 Եւ ոչ էլ գետեր, այլ մի կուղբ ահագին  
 Ջրանցք է փորել Հրատի երեսին:

## ՎԱՅԿԵՏ ԲԼԼ

Դու որոշեցիր պաշտոնդ թողնել  
 Ու քո դիպլոմի գործը շարունակել,  
 Դու որոշեցիր դառնալ հայագետ  
 Ու հայտնաբերել նոր Տիգրանակերտ:

Էլ չես լինի դու երկրորդ քարտուղար,  
 Որ պիտի հետո առաջին դառնար:  
 Հազիվ դու հիմա կ.գ.ա. կլինես,  
 Էն էլ թե ստացվի՝ թեզդ պաշտպանես:

Բա մտածեցիր ա՛յ տղա Ձավեն,  
 Թե մեր էրեխեքն ի՞նչ պիտի ուտեն,  
 Թե էսօր-էգուց ի՞նչ պիտի հագնեն,  
 Թե թաղում իրենց, ո՞նց պիտի նայեն:

Գոնե քիչ, միքիչ էլի դիմանայիր,  
 Անոյին գոնե դու մարդու տայիր,  
 Ամուսնացնեինք գոնե Վաղոյին,  
 Հետո նոր տայիր խելքդ Լեոյին:

Բայց դե ինչ հիմի. պիտի գոտեպնդվենք,  
 Պիտի գոտում էդ նոր անցքեր բացենք,  
 Պիտի հետո նոր, նոր անցքեր բացենք,  
 Ու էլի, էլի, շատ անցքեր բացենք...

Դիպլոմիդ մեռնեմ քո՝ հայագետի,  
 Մի հատ էլ լիներ իրավագետի,  
 Կամ գոնե մի հատ դիպլոմ հաշվապահի...  
 Դե սրանով արի ու տուն պահի:

## ԴԵԼԻՅԼԼ

Ես քեզ տեսա երբ անցնում էիր դու փողոցով մեր  
 Եւ ժպտացիր դու ինձ բաց ժպիտով վարարուն:  
 Ո՛հ, սա իմ կինն է,  
 Մտածեցի, շտապեցի հետքերով քո իսկույն:

Հայ, հայ, հայ, Դելայլա...  
 Վայ, վայ, վայ, Դելայլա...  
 Գերեցիր դու ինձ ժպիտով քո անգին,  
 Բայց դա շատ քիչ է, կուզեմ միշտ լինել քո կողքին:

Դա շատ վաղուց էր. արդեն գլորվել է շաբաթը  
 Ու մինչ այսօր քեզ տեսել եմ միայն յոթ անգամ:  
 Դու ինձ տանջում ես,  
 Բայց կգտնեմ, կգտնեմ քո սրտի նեղ ճամփան:

Հայ, հայ, հայ, Դելայլա...  
 Վայ, վայ, վայ, Դելայլա...  
 Գերեցիր դու ինձ ժպիտով քո անգին,  
 Բայց դա շատ քիչ է, շատ քիչ ժպտա ինձ կրկին:

# ԶԳՈՒՄ

*Вид у Ковида —  
Страшного вида:  
То тут, то там —  
Новый штамм.*

Հանարյա ըստ Վիսցիու:-))

*Թագավարակը  
Ճարպիկ ու արագ է.  
Կարծում ես՝ կատակ է,  
Ստանում ես ապտակը:*

*Ամեն անգամ՝  
Նոր շտամմ,  
Շատ թարմ:*

*Կարծում ես՝ պրծավ.  
Ահա քեզ նոր ցավ:  
Վտանգը անչափ է  
Միշտ ահ ու սարսափ է:*

*Եւ ամեն անգամ՝  
Նոր շտամմ,  
Շատ թարմ:*

*Ոչինչ չի փրկում,  
Միայն՝ պատվաստում:  
Փրկիր մեզ Բիլ Գեյթս,  
Դու ձեւը գիտես:*

*Բայց ամեն անգամ՝  
Նոր շտամմ,  
Շատ թարմ:  
Նոր շտամմ,  
Շատ թարմ:  
Նոր շտամմ,  
Նոր շտամմ,  
Նոր շտամմ...*

## ՕՒԿԱԹԻԼԼՅԻՆ ՔԼԻՅԼԿՆԵՐ

\* \* \*

Շոշն անցավ կարմիր լույսին՝  
«Պորշ»-ով փոխն ասֆալտին,  
Լավ է կար քթին դիմակ,  
Զունեցավ թագավարակ:

\* \* \*

Ունեցավ սրտի կաթված  
Իմաստունը պատվաստված,  
Շատ հանգիստ էր նա սակայն.  
Թեստն էր իր բացասական:

\* \* \*

Գործարարը տվեց տակ,  
Բայց շուներ թագավարակ:  
Ու այդպես գաղտնիք մնաց.  
Ինչո՞ւ գործը վատ գնաց:

\* \* \*

Համառոներին կստիպեն,  
Որ անպայման պատվաստվեն,  
Որ լսողին պատվաստված,  
Զվարակեն էլ հանկարծ:

\* \* \*

Նա հազում է ու ջերմում,  
Բայց թագեր շունի թեստում:  
Բժիշկներն են զարմանում.  
Բա ինչո՞ւ է նա հազում:

## ՇՊԻՏ ԸՆԹԻՒ

*He xodume, detu v Afriku zulyat'...*

Դուրս մի՛ ելեք ձեր տներից,  
Այնտեղ մութ փողոցում,  
Թագավարակն է թփերից  
Խոցել ձեզ պատրաստվում:

Դուրս մի՛ ելեք ձեր տներից,  
Նստեք ու դողացեք.  
Հարազատին դիտեք հեռվից,  
Եւ հյուր մի՛ գնացեք:

Եթե ելնեք ու նա տեսնի  
(Ասենք, բակում ձեր տան)  
Իսկույն փախչեք ուր պատահի՝  
Բիլլ Գեյթս ձեզ պահապան:

Ձեռք մի՛ մեկնեք բարեկամին.  
Դիպչեք նրան ոտքով,  
Որ նենգ վարակը թոքերին  
Չանցնի մաշկի տակով:

Նիկոլ շտա, եկեղեցում  
Լսեք դուք պատարագ,  
Վտանգավոր այդ տարածքում  
Ձեզ շեն թողնի մնաք:

Եւ քահանան դիմակավոր  
Կասի ձեզ. «Իմ որդյակ,  
Աստծո կամոք է հարկավոր,  
Որ դու կրես դիմակ»:

Ամբողջ շաբաթ տանջել է քեզ  
Հանգիստը երազած՝  
Երեկոյան չարժե մտնես  
Դու սրճարան հանկարծ:

Այնտեղ մարդիկ խմում են սուրճ  
Դիմակը իջեցրած.  
Ձեն ամաչում, երբ իրենց շուրջ  
Կանայք էլ են նստած:

Դուրս մի՛ ելեք ձեր տներից,  
Նստեք դուք ու սպասեք,  
Մինչեւ Թորոսը՝ Սորոսից,  
Կանչի, որ պատվաստվեք:

Այ՛, երբ որ պատվաստվեք... կուզեք՝  
Գուցե փողոց իջնեք...  
Սակայն դիմակը՝ մի՛ հանեք,  
Շառից հեռու եղեք:

# ՎՊՐՈՒԽ ԵՆՔ, ՈՐ ԲԼՄԲԼՍԵՆՔ

Ապրում ենք մենք, որ բամբասենք:  
Մենք բամբասում ենք, որ ապրենք:  
Լինի՝ շշուկ՝ հարեանից,  
Թե՛ պետական անցուղարձից,

Կամ՝ մի խնդիր՝ զուտ գիտական,  
Եւ կամ էլ հարց՝ բարոյական.  
Տեղեկույթի փոխանակում՝  
Ահա, թե ինչ է կատարվում:

Եւ բամբասում են պրոտոնները՝  
Մեզոններով փոխանակվում,  
Եւ բամբասում են ատոմները՝  
էլեկտրոններ միմյանց հանձնում:

Եւ բջիջներն են բամբասում ու  
Դնթ-ներ տալիս-առնում:  
Եւ որ հարմար լինի շփումը  
Կամաց իրար են մոտենում...

Ձգվում է այդ ամենն իրար.  
Կազմում միջուկ, կազմում է տարր,  
Կազմում աստղեր, մոլորակներ,  
Հողեր, սարեր, ջրեր, ամպեր:



Կազմում հյուսվածք, կազմում էակ՝  
Կենդանիներ տարբեր տեսակ:  
Նաեւ մարդկանց է դա կապում,  
Ընտանիքներ ձեւավորում...

Ուրեմն, թե կուզենք ապրել,  
Մեզ անհրաժեշտ է բամբասել:  
Իմաստը դա է հենց կյանքի.  
Թող ոչ մեկին դա չնեղի.

Ապրում ենք մենք, որ բամբասենք:  
Եւ բամբասում ենք, որ ապրենք:

\* \* \*

Für Elise-ն արդեն ստեղծված է,  
Նաեւ այլ «գտած» գործեր:  
Մի՞թե թիւը այդ սպառված չէ,  
Կան դեռ չգրված գանձեր:  
Տասներկու հնչուներ շատ չէ  
Եւ որքան էլ համադրեն,  
Մի՞թե վերջ չունի այդ շարքը.  
Դեռ որքան մնաց «գտնեն»...  
Եւ հետո էլ ի՞նչ անեն...

411X



\* \* \*

Եւ կտանջի անքնությունը,  
Եւ կհիշվեն դարդերը այն,  
Որ արթնացնում են մենությունը  
Եւ գիշերվա պահերն անձայն:

\* \* \*

Գիշերը որպես մուգ-թավշյա վարագույր վայր իջավ,  
Որպես մի արար խաղարկված այս մի օրն էլ անցավ:

\* \* \*

Ինձ հարց տվեք՝ պատասխանեմ,  
Ինձ պատվիրեք՝ կկատարեմ:  
Պատասխանեմ՝ կհասկանաք,  
Կատարածով՝ կգոհանաք:  
Բայց չհարցնեք՝ ես ի՞նչ ասեմ,  
Չպատվիրեք՝ ես ի՞նչ անեմ...

\* \* \*

Ժամանակի լուսանկարը, բանաստեղծի սեղմ տողերում:

\* \* \*

Երբ որ մարմնում բանտված հոգին հայացք նետի նրան դրսից...

\* \* \*

Ապրում եմ ես իմ հուշերով.  
Այնտեղ շատ ջերմ է, ապահով:

\* \* \*

Դիմակ-հանդեսը ավարտվեց.  
 Ուլքեր՝ ծառա, եւ ով է՝ տերը,  
 Ուլքեր ոչխար, ուլքեր՝ գալլերը,  
 Շատ պարզորոշ բացահայտվեց:

\* \* \*

Ուրիշ ենք, զոռով չի: Ահա, համոզվենք.  
 Դիմակը պատռում են, որ դեմքը տեսնեն:  
 Մեզ մոտ հակառակն է. դիմակ դրեցին  
 Եւ դեմքն իսկական բոլորին բացեցին:

\* \* \*

Ինչո՞ւ, ասա, ինչո՞ւ պիտի ներեմ,  
 Ինչո՞ւ պիտի, ես քեզ ինձ մատուցեմ,  
 Ինչո՞ւ պիտի անցածը մոռանամ,  
 Ինչո՞ւ այսպես հուլյսին իմ զոհ գնամ:

\* \* \*

Բանահյուսքը բառ չի սոսկ,  
 Ոչ էլ անվերջ բառահոսք:  
 Գյուտ չէ այն՝ մատից ծծված,  
 Ոչ էլ միտք՝ լրիվ ծեծված:  
 Դա եւ միտք է, չափ է, հանգ,  
 Եւ լեզու է, ոճ, երանգ:  
 Եւ զարմանք...

\* \* \*

Երգիր կիթառ, ցրուիր թախիծ.  
 Մենք երջանիկ ենք ամէնքից:  
 Փայլիր կրակ, հոսիր գինի.  
 Եւ թող յաւէտ այդպէս լինի:

\* \* \*

Պիտի հաղթենք եւ կտեսնենք դա,  
Թեկուզ ժամերն առաջ տարվեն,  
Թեկուզ ե՛ւ կարգը, ե՛ւ օրենքը,  
Մաքուր թղթից նորից գրվեն:

\* \* \*

Ասվել է շատ, շասվածը քիչն է:  
Կրկնության արժեքն ոչինչ է:  
Չասված լինելն էլ երաշխիք չէ,  
Որ թե ասվի՝ արդեն իսկ ինչ է:

\* \* \*

Ափսոսում ես, ուրեմն անցել է,  
Ափսոսում ես, ուրեմն՝ չկա,  
Միայն սրտիդ մեղմ բաբախելն է  
Մնում դրան հուշ ու վկա:

\* \* \*

Գիտակցություն, որ ավարտվեց ճամփան,  
Որ առջեւում չկա էլ ոչ մի բան:  
Զգացողություն, որ կյանքն անմիտ դարձավ,  
Եւ չի լինի արդեն ոչ խինդ, ոչ ցավ:

\* \* \*

Կրկին դասերն են հեռավար:  
Հնձում է Zoom-ը նոր ավար:  
Ուսումն ընկնում է գլխիվար:  
Բոլորը լուռ են ու շիվար:  
Հիմա մենք մարդ ենք, թե՛ տավար...

\* \* \*

Արդյո՞ք չկա ոսկի միջին:  
 Ասում են, կա՝ թվաբանները.  
 Պետք է հեռու լինել փոքրից,  
 Բայց եւ չընկնել մեծի ոտքերը:

\* \* \*

Վաղվա համար շասես. «Ինչո՞ւ»՝  
 Այսօր այն կա սրտիդ միջում,  
 Իսկ երեկվանն էլ, թե. «Ինչպե՞ս»՝  
 Հուշերիդ մեջ դու կգտնես:

\* \* \*

Բետոն ու թիթեղ, ապակի ու լարեր,  
 Փոշին է բոլոր փողոցները պատել.  
 Կղմինդր կարմիր, կոպտատաշ շարվածքներ  
 Կանչում են հոգին իրենց մոտ բնակվել:





ԳԻՆԻՍԵՇԸ

---

ՋՐԿԵՂԵՂԸ. ԱՂՅՈՒՄԱԿ ԺԱ

Խորհում է մի օր Գիլգամեշը արի՛  
 Արքան իմաստուն փառապանծ Ուրուքի.  
 «Անցնում են օրեր, ամիսներ ու տարի  
 Եւ մի օր գալիս է ավարտը կյանքի:  
 Անգոր են մարդիկ. թե առողջ, թե տկար,  
 Չունեն մահվան դեմ նրանք ոչ մի հնար:  
 Բայց չէ՞ որ կա մեկը ազնիվ մեր ցեղում,  
 Որ արդ գետերի ակունքում է ապրում,  
 Որին հաջողվել է դիցաց պես անմահ  
 Ապրել տարիներ ու դարեր անհամար»:  
 Անունն է հիշում նրա՝ Ութնափիշտի,  
 Որ անմահության մեծ գաղտնիքը գիտի:  
 Եւ նա որոշում է անցնել սար ու ձոր,  
 Գտնել ցեղակցին իր հեռու-հեռավոր:  
 Անցնում է գետեր նա, անցնում է լեռներ,  
 Լճեր է կտրում, մագլցում է ժայռեր,  
 Եւ մի օր գտնում է նրան մեծ այգում,  
 Հեռու՝ փառահեղ Եփրատի ակունքում:

Եւ ասում է Գիլգամեշը հեռավոր Ութնափիշտին  
 — Քեզ նայում ու զարմանում եմ, նախնի դու իմ թանկագին:

Երկուսիս հասակը նույնն է,  
 Երկուսիս էլ ուժը նույնն է,  
 Եւ երկուսս էլ հոգնած  
 Հանգստանում ենք պառկած:  
 Քեզ ինչպէս է հաջողվել  
 Աստվածներին հմայել,  
 Եւ հաստատվել վերելում՝  
 Անմահների կաճառում:

Եւ տալիս է պատասխանն իր Ութնափիշտին հեռավոր.  
 — Լսիր, կասեմ քեզ գաղտնիքը աստվածների մեր հզոր:

Գիտես Շուրիպակը, քաղաքը հայտնի,  
 Փոված ավերին փառահեղ Եփրատի  
 Շատ հին է քաղաքն այդ, եւ միշտ հաջողակ  
 Ապրել է տաքուկ մեծ դիցաց թեւի տակ:  
 Բայց մի օր նրանք հույժ հոգնած աշխարհից  
 Մաքրել ցանկացան այն բոլոր մարդկանցից:  
 Վճիռ կայացրին աստվածները ահեղ.  
 Բերել աշխարհին սոսկալի ջրհեղեղ:  
 Այնտեղ էր Անոն, եւ էնլիլը վարպետ,  
 Նինուրտը բանբեր, եւ էննուզը ջրպետ,  
 Եւ էան լուսաչ իրենց հետ էր նույնպես  
 Եւ ուխտն այդ նրանց բոլորի հետ կապեց:  
 Բայց գործը դաժան էր եւ էան տրտում  
 Գաղտնիքն այդ շուտով խրճիթին է հայտնում:

«Այ խրճիթ, խրճիթ, այ դու պատ, դու պատ,  
 Լսիր դու խրճիթ, հիշիր, այ դու պատ,  
 Բար-Տուտու որդի, շուրուպակեցի,  
 Քանդիր տունը քո, դու նավ կառուցիր,  
 Լքիր լիությունը, քո կյանքը հոգա՛.  
 Հոգին քո փրկիր, քեզ ոսկիդ պետք չի գա,  
 Ծախիր ունեցածդ, ու նավ կառուցիր,

Եւ ինչ շնչավոր է՝ դու նավը բարձիր:  
 Այդ նավը պիտի քառանկյուն կառուցես,  
 Երկայնքը ու լայնքը կանես հավասար  
 Արձակ Օվկիանի պես ծածկով կծածկես,  
 Որ մեծ տապանին քո ելնի որպես սար»:

Իսկ երբ խրճիթի պատերով հով անցավ,  
 Այդ խոսքն իմ Աստծո ականա ինձ հասավ:

Սարսափ ինձ պատեց, երբ նրան լսեցի,  
 Եւ էա Տիրոջն իմ այսպես ասացի.

«Քո խոսքը, ո՛վ Տեր իմ, պիտի ես հարգեմ.  
 Ինչպես ասացիր, ճիշտ այդպես էլ կանեմ:  
 Սակայն երբ նավի կառուցումը սկսեմ,  
 Ազգին, մեծերին դա ինչպե՞ս բացատրեմ»:

Եւ էան բացեց իր բերանն ու ասաց,  
 Եւ ինձ, ծառային իր, ծածուկ շնչաց.

«Իսկ դու այսպիսի պատասխան տուր նրանց.  
 «Գիտեմ, որ էնլիքն, ինձ ատում է անասնձ.  
 Այլեւս ես ձեր քաղաքում չեմ ապրի  
 Ոտքերս հողից էնլիքի կկտրեմ:  
 Իմ տեր էայր մոտ՝ Օվկիանը դեպի  
 Կողմերն այս թողած անհապաղ ես կիջնեմ»:

Իսկ նա ձեր գլխին հորդ անձրեւ կբերի ի վերուստ:  
 Թռչունների գաղտնիքները այդօր կիմանաք:  
 Թաքստոցները ծովի ձկների դուք այդօր կիմանաք,  
 Իսկ երկրում ամենուր ուր նայեք կլինի հունձ հարուստ:  
 Առտու մի տարափ կտեղա, իսկ գիշեր՝  
 Անձրեւ ձեր աչքով կտեսնեք հացաբեր»:

Ու հենց որ բացվեց նրբին փայլը այգի,  
 Ու հենց որ իմ կողը երկիրը լաց,  
 Թողած իր գործերը, արտեր ու այգի,  
 Ամբողջ ժողովուրդը ինձ մոտ հավաքվեց:  
 Բոլոր այրերին լծեցի ես գործով՝  
 Տները քանդում են, պարիսպը փշրում:  
 Մանկիկը տիկով փայտի խեժ է բերում,  
 Ուժեղը պիտույք է կրում զամբյուղով:

Հինգ օրում հիմնեցի ես իրանը.  
 Դրեցի կանգնականեր, թեքաններ:  
 Հղկեցի ողնուցի մեծ գերանը,  
 Տաշեցի կողերի տախտակներ:

Մեկ երրորդ տասնորդի երեսով էր,  
 Տախտակամած հարթակի,  
 Հարյուր քսան կանգունի նավակող էր,  
 Հարյուր քսան կանգունով եզրակի:  
 Ուրվագիծ քաշեցի,  
 Գծագիր գծեցի.  
 Վեցը հարկ ես նավում շինեցի,  
 Յոթ մասի բաժնեցի,  
 Պատերով հատեցի,  
 Ինը խուց ներքեւում արեցի,  
 Զրահոլ բացեցի,  
 Նավադեկն ընտրեցի,  
 Հանդերձանք լավագույն դարսեցի:  
 Երեք չափ քարի ձյուժ հնոցում ձուլեցի  
 Երեք չափ շողուն խեժ ես այնտեղ լցրեցի,  
 Երեք չափ ընտրիր յուղ դրա մեջ հալեցի:

Բացի մեկ չափ յուղից, որ ներծծման ծախսվեց,  
 Իմ ղեկակալն էլ դեռ երկու չափ յուղ պահեց:  
 Բնակչության համար մեր քաղաքի հզոր,  
 Յլեր ու ոչխարներ մորթել եմ ամեն օր,

Պտուղների հյութով, յուղով, կարմիր գինով  
Մարդկանց ես պատվեցի, ասես գետի ջրով,  
Եւ մեծ խնջույք եղավ, ինչպէս Ամանորին:  
Եւ ես բույրեր անուշ լցրի իմ ձեռքերին:

Ու մեծ նավը պատրաստ էր մուտին Արեւի:  
ու քաշել սկսեցին դեպ ջրերը ծովի,  
Եւ վերից ու տակից պահեցին ձողերով,  
Եւ ջրում այն սուզվեց իր երկու երրորդով:

Բեռնեցի այն ես ամենով, ինչ որ ունեի  
Բեռնեցի այն ես ամենով, ինչ արծաթ ունեի  
Բեռնեցի այն ես ամենով, ինչ ոսկի ունեի  
Բեռնեցի այն ես ամենով, ինչ տավար ու թռչուն ունեի,  
Ամբողջ ընտանիքն իմ ու ցեղը ես նավ բարձրացրի,  
Դաշտի անասուն ու գազանը ես նավ բարձրացրի,  
Վարպետ ու ճարտար ու ծառա իմ ես նավ բարձրացրի:

Ժամկետը դրեց ինձ Շամաշը հերոս,  
Եւ ես հասկացա իր ասածը անխոս.  
«Առտու մի տարափ կտեղա, իսկ գիշեր՝  
Անձրեւ քո աչքով կտեսնես հացաբեր՝  
Այնպէս որ հիմա իսկ դու նավ բարձրացիր,  
Դռները փակիր եւ ճեղքերը ձյութիր»:  
Եւ ժամը հասավ՝ որոշված ի վերուստ,  
Եւ ես շտապեցի դեպի նավն՝ իմ թաքուստ.  
Առտու մի տարափ էր տեղում, իսկ գիշեր՝  
Անձրեւ իմ աչքով ես տեսա հացաբեր:

Դեմքին նայեցի նոր ես եղանակի.  
Նրան իսկ նայելն էր արդեն սոսկալի:  
Ու նավ ես ելա, ու դռներն ձյութեցի,  
Ու գանձեր ու մի մեծ ապարանք տվեցի  
Իմ նավը ձյութած քաջ Փուրուզ-Ամուրրին  
Ինձ լավ ծառայած նավագործ վարպետին:

Վաղորդյան առաջին լույսի հետ գոյացավ՝  
 Երկնքի հիմքերից մի սեւ ամպ բարձրացավ:  
 Ադդուն է սաստու շառաշում մեջտեղում,  
 Շուլլաթն ու Խանիշն են շարժվում առջեւում  
 Սարով ու ձորով բանբերներ են գալիս:  
 Մածեր պատռելով մեծ Նինուրտն է գալիս,  
 էրգալը պոկում է ձողերն պատվարի:  
 Վառած լապտերները Աննունակների,  
 Իրենց ճաճանշով ողջ երկիրն են հուզում:  
 Ադդուի պատճառով էլ երկինքն է սառչում,  
 Եւ ինչը լուսեղ էր՝ դարձել է խավար,  
 Ճեղքվել է երկինքը ամբողջ՝ զերդ գավաթ:  
 Փոթորիկ ընթացավ ամբողջ օրն առաջին.  
 Հարավից էր փչում սաստկաշունչ ցուրտ քամին,  
 Արագ հարձակվեց ու լեռներ հեղեղեց,  
 Ինչպես պատերազմը երկիրն ավիրեց:  
 Զի տեսնում մեկը մյուսին՝ խավարում,  
 Երկնից էլ մարդիկ արդեն չեն նշմարվում:  
 Սարսափեցրեց մեծ հեղեղը դիցաց,  
 Երկինքն Անուի բարձրացան սարսափած,  
 Շան պես կծկվել են, շարվել են դրսում:  
 Իշտարը ճշում է, ասես, երկունքում,  
 Դիցաց տիրուհին, ում որ ձայնն է չքնաղ.  
 «Թող օրն այն կավի վերածվեր անհապաղ,  
 Երբ ես խորհրդում չարություն վճռեցի:  
 Ինչո՞ւ խորհրդում չարություն վճռեցի,  
 Մարդկանց իմ սպանող պատերազմ սկսեցի:  
 Եւ մի՞թե ես ինքս մարդկանց եմ ծնել,  
 Որ արդ ձկան պես նրանք ծովը ընկնեն»:  
 Եւ Անունակյան դիք լալիս են իր հետ,  
 Հաշտվել են, ողբում են, ճշում են իր հետ,  
 Միմյանց են գալիս, իրենց վախն է տիրել,  
 Շուրթերն են նրանց բոլորի չորացել:

Վեց օր, վեց գիշեր է քամին մոլեգնում,  
 Հեղեղը հողմով ողջ երկիրն է պատում:

Բայց յոթերորդ օրը ամեն ինչ լուեց  
 Հողմի ու ջրի մեծ պայքարն ավարտվեց.  
 Հողմի ու ջրի պատերազմը ահեղ,  
 Որում զոհվեցին եւ մեղսոտ եւ անմեղ:  
 Եւ ծովը հարթվեց, փոթորիկը լուեց՝  
 Հեղեղն ամեհի վերջապես դադարեց:

Ես բացեցի օդանցքը՝ եւ լույս ընկավ դեմքիս,  
 Ես նայեցի ծովին եւ՝ լուսթյուն շորսդիս,

Եւ ինչ շնչավոր էր, իր վերջն էր գտել,  
 Եւ ողջ մարդկությունը կավի վերածվել:

Ինչպես կտուր տափակ էր հատակը ջրերի,  
 Որ հաստ շերտով պատել երեսը ողջ երկրի:  
 Ծնկի ես ընկա ու լալիս եմ,  
 Արցունքն է դեմքով իմ հոսում:  
 Մի ափ, որ քարից ու հողից է  
 Փորձում եմ գտնել բաց ծովում:

Ու տասներկու ասպարեզում  
 Տեսա՝ կղզի է նշմարվում:

Դա լեռն էր Նիցիիր, որ իմ դեմ հայտնվեց  
 Նիցիիր լեռան մոտ հենց իմ նավը կանգնեց:  
 Եւ մեծ Նիցիիր լեռը իմ նավը պահեց,  
 Նիցիիրը իմ նավը ճոճվել չթողեց:  
 Մեկ, երկու օր այն իմ նավը պահեց,  
 Նիցիիրը պահեց ու ճոճվել չթողեց:  
 Երեք ու չորս օր այն իմ նավը պահեց,  
 Նիցիիրը պահեց ու ճոճվել չթողեց:  
 Ու հինգ, ու վեց օր այն իմ նավը պահեց,  
 Նիցիիրը պահեց ու ճոճվել չթողեց:



Եւ յոթերորդ օրը, երբ աչք բացեցի,  
 Աղավնի հանեցի եւ երկինք թողեցի.  
 Թռավ աղավնին, բայց արագ ետ դարձավ.  
 Տեղ չգտավ, եւ իսկույն ետ եկավ:  
 Ծիծեռնակ հանեցի եւ երկինք թողեցի.  
 Թռավ ծիծեռնակը, արագ ետ դարձավ .  
 Տեղ չգտավ, եւ իսկույն ետ եկավ:  
 Ագռավ հանեցի եւ երկինք թողեցի.  
 Ագռավը թռավ, ջրի անկը տեսավ,  
 Կռուաց, լեշ գտավ ու չվերադարձավ:  
 Դուրս եկա ես ու շորս կողմ նայեցի,  
 Ու շորս կողմերին ես գոհեր ձոնեցի,  
 Սարի կատարին էլ ես բուրվառեցի.  
 Ես ճիշտ յոթ եւ յոթ բուրվառներ դրեցի,  
 Դրանց թասերում ես բույրեր լցրեցի,  
 Եղեգն ու մայրի, մրտենի տաշեցի:  
 Դիք զգացին բույրը,  
 Զգացին բարի բույրը,  
 Դիք ճանճի պես գոհի շուրջ խմբվեցին  
 Եւ մեծ մի խորհուրդ նրանք գումարեցին:

Շուտով եկավ չքնաղ մայր դիցուհին:  
 Շքեղ մանյակն իր մեծ նա բարձրացրեց  
 (Կերտել է այն Անուն քարից անգին),  
 Հանեց այն վեր, ապա այսպես խոսեց.  
 «Ո՛հ դիք, տեսեք պարանոցիս լաշվարդը՝  
 Ինչպես որ այն միշտ հետս կմնա,  
 Այնպես օրերն այս կմնան իմ դարդը՝  
 Դարեր անցնեն դրանք ես չեմ մոռնա:  
 Եւ դիք բոլոր գոհին թող մոտենան,  
 Սակայն էնիլը թող հեռու մնա,  
 Քանզի նա անխոհեմ հեղեղ արեց  
 Եւ իմ մարդկանց նա կոտորման մատնեց»:

Էնլիլը եկավ ու երբ նավը տեսավ,  
 Տեսարանից այդ սաստիկ զայրացավ:  
 Ընդդեմ հավաքված ողջ Իգիզ մեծ դիցաց.  
 Խոսեց խորագին իր ցասմամբ տոգորված.  
 «Տեսնում եմ ինչ-որ հոգիներ են փրկվել:  
 Նրանց աջակցող է այստեղ հայտնվել»:  
 Նինուրտը բացեց իր բերանն ու ասաց.  
 Հերոս էնլիլին իմաստուն նա ասաց.  
 «Ո՛վ թե ոչ էան է միտք հղանում:  
 Եւ էան, որ միշտ ամեն գործ է անում»:  
 Եւ էան խոսեց եւ այսպես նա ասաց.  
 Հերոս էնլիլին իմաստուն նա ասաց.  
 «Հերոս ես, էնլիլ, իմաստուն՝ դիցաց մեջ:  
 Բայց ո՞նց խեղդեցիր ողջ աշխարհը այս խեղճ:  
 Մեղք գործածին թող պատիժը հասնի,  
 Հանցավորին թող պատիժը հասնի,  
 Այն էլ զսպիր քեզ՝ թող չկործանվի,  
 Եւ դիմացիր՝ եւ թող շտապավի:  
 Բայց քան, այսպիսի մի հեղեղ անեիր,  
 Լավ էր առյուծը մարդկանց քչացներ:  
 Եւ քան, այսպիսի մի հեղեղ անեիր,  
 Լավ էր, որ գայլը մարդկանց քչացներ:  
 Եւ քան, այսպիսի մի հեղեղ անեիր,  
 Լավ էր, որ սովը երկիրն ավիրեր:  
 Եւ քան, այսպիսի մի հեղեղ անեիր,  
 Լավ էր, որ ցավը մարդկանց կոտորեր:  
 Իսկ ես մեծ դիցաց գաղտնիքներ չեմ բացել.  
 Իմաստունին սոսկ երազ եմ բերել  
 Նա ինքն է գաղտնիքը դիցաց կռահել:  
 Իսկ այժմ խորհուրդն է ուզում քո լսել»:  
 Էնլիլը եկավ ու իմ նավը ելավ,  
 Նա ձեռքն իմ բռնեց, ապա դուրս հանեց ավի,  
 Ինձ եւ կնոջս ծնկի իջեցրեց  
 Ճակատներին մեր իր ձեռքը դրեց  
 Կանգնեց մեր միջեւ նա, կանգնեց եւ օրհնեց.  
 Այսպես մեծ էնլիլը այդժամ որոշեց.

«Ութնափիշտին մինչ այս օրը սոսկ մարդ էր,  
Բայց այսուհետ կլինի մեր նման,  
Թող ընդունի նա դիցաց կյանքն ու կարգը»:  
Ու ինձ էլ այսպես հեռուները տարան:

Ու ապրեցրին գետերի ակունքում:  
Հայքում, ուր քեզ հետ եմ հիմա գրուցում:  
Այսպես ավարտվեց այդ մեծ գործը դիցաց,  
Որ կյանք նոր կերտեց, նոր աշխարհ, նոր մարդկանց:

Ու չի լինելու էլ առիթ այդպիսի,  
Որ մարդը մահվան ճիրանից խուսափի:



ԻՊԻՏԻՆ

---

ԵՐԵՎԱՆԻ ՕՐԴՆԵՐԳ

## I. 29. ԱՐԴԻՆԻՒՆ\*

Թե այսպես է, ո՛վ Իսկական, ըմպող գինի,  
 Որ ապրում ենք կարծես անհույս,  
 Տուր մեզ դու հույս, ո՛վ Արդինի,  
 Կովեր, ձիեր, հազար բարիք տուր ի վերուստ,  
 ո՛վ գերհարուստ:

Ո՛վ գեղաշուրթ, տեր պարգեւի,  
 Զորեղ, քոնն է ուժը անզուսպ:  
 Տուր մեզ դու հույս, ո՛վ Արդինի,  
 Կովեր, ձիեր, հազար բարիք տուր ի վերուստ,  
 ո՛վ գերհարուստ:

Անզարթ քնով թող քուն լինի  
 Կեղծահայացք չարը անկուշտ:  
 Տուր մեզ դու հույս, ո՛վ Արդինի,  
 Կովեր, ձիեր, հազար բարիք տուր ի վերուստ,  
 ո՛վ գերհարուստ:

Եւ թող ժլատ մարդը քնի,  
 Առատաձեռնը չտա կորուստ:  
 Տուր մեզ դու հույս, ո՛վ Արդինի,  
 Կովեր, ձիեր, հազար բարիք տուր ի վերուստ,  
Did he who made the Lamb make thee?

Tyger Tyger burning bright,  
In the forests of the night:  
What immortal hand or eye,  
Dare frame thy fearful symmetry?

1795s

ՎԼԳՐԸ

Վազր, վազր՝ վառ այրվող,  
Անտառներում գիշերող.  
Ի՞նչ անմահ աչք, ձեռքը մեծ,  
Կերպն այդ քո ահեղ կերտեց:

Ո՞ր հեռու խոր երկնքում  
Հուրն այրվեց քո աչքերում:  
Ո՞ր թեւքով է նա ճախրել:  
Ո՞ր ձեռքով է հուր կորզել:

Եւ ի՞նչ արվեստ եւ ի՞նչ հեց,  
Սրտիդ շղեր ոլորեց:  
Եւ երբ սիրտդ թրթռաց,  
Ո՞ր ահեղ ձեռքով դրոպված:

Մո՞ւրճը որ, ո՞նց շղթայեց,  
Ո՞ր փռում ուղեղ թրծեց:  
Ի՞նչ զնդան, ի՞նչ ծանր ափ  
Հանդգնեց բռնել սարսափ:

Երբ աստղից նետեր իջան,  
Արցունքներ երկինք ելան.  
Գործն իր նա ժպտով օծեց,  
Գառն ու քեզ հենց նա՞ կերտեց:

Վազր, վազր՝ լույս այրվող,  
Անտառներում գիշերող.  
Որ անմահ աչք, ձեռքը մեծ,  
Կերպն այդ տալ քեզ հանդգնեց:

AUGURIES OF INNOCENCE

To see a World in a grain of sand,  
And a Heaven in a wild flower,  
Hold Infinity in the palm of your hand,  
And Eternity in an hour.

A robin redbreast in a cage  
Puts all Heaven in a rage.  
A dove-house fill'd with doves and pigeons  
Shudders Hell thro' all its regions.

A dog starv'd at his master's gate  
Predicts the ruin of the State.  
A horse misus'd upon the road  
Calls to Heaven for human blood.

Each outcry of the hunted hare  
A fibre from the brain does tear.  
A skylark wounded in the wing,  
A cherubim does cease to sing.

The game-cock dipt and arm'd for fight  
Does the rising sun affright.  
Every wolf and lion's howl  
Raises from Hell a Human soul.

The wild deer, wandering here and there,  
Keeps the Human soul from care.  
The lamb misus'd breeds public strife,  
And yet forgives the butcher's knife.

ԱՄԵՆՈՒԹՅԱԿ  
ԳՈՒՇԿՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տեսնել Աշխարհ մեկ հատիկում,  
Պահել ափում Անվերջությունը,  
Երկինք տեսնել՝ վայրի ծաղկում,  
Եւ մեկ ժամում՝ Հավերժությունը:

Մորեկանը վանդակում  
Ողջ դրախտն է զայրացնում:  
Աղավնատունն է լցված՝  
Ողջ դժոխքն է փոթորկված:

Սովից սատկած անտեր շուն՝  
Երկրի վերջն գուշակում:  
Ճամփին տանջված սոված ձին  
Բողոքում է երկնքին:

Ճիշը որսած ճագարի  
Ջիղ է պոկում ուղեղի:  
Արտույտ է վիրավորվում՝  
Քերովբեն էլ չի երգում:

Աքաղաղը կռիվի՝  
Ահն է ծագող արեւի:  
Ոռնոցն առյուծի, գայլի,  
Վիհից հոգի կհանի:

Եղնը վայրի՝ թափառող,  
Հոգին փրկել է կարող:  
Գառ տանջված բերեց խռով՝  
Մսագործին ներելով:

The bat that flits at close of eve  
Has left the brain that won't believe.  
The owl that calls upon the night  
Speaks the unbeliever's fright.

He who shall hurt the little wren  
Shall never be below'd by men.  
He who the ox to wrath has mov'd  
Shall never be by woman lov'd.

The wanton boy that kills the fly  
Shall feel the spider's enmity.  
He who torments the chafer's sprite  
Weaves a bower in endless night.

The caterpillar on the leaf  
Repeats to thee thy mother's grief.  
Kill not the moth nor butterfly,  
For the Last Judgement draweth nigh.

He who shall train the horse to war  
Shall never pass the polar bar.  
The beggar's dog and widow's cat,  
Feed them, and thou wilt grow fat.

The gnat that sings his summer's song  
Poison gets from Slander's tongue.  
The poison of the snake and newt  
Is the sweat of Envy's foot.

The poison of the honey-bee  
Is the artist's jealousy.  
The prince's robes and beggar's rags  
Are toadstools on the miser's bags.

Գիշերվա ճախրող շղջիկը  
Անհավատ մտքի թելիկ է:  
Բուռի ճիշը անտառում,  
Վախն է անկրոնի ասում:

Յախսարեկ վիրավորողը  
Զի տեսնի մարդկանց գորովը:  
Ով եզանը զայրացնի  
Կնոջ սերը չի տեսնի:

Ճանճ սպանող տղային  
Քեն կհասնի սարգային:  
Ով տանջում է բզեզի,  
Անվերջ գիշեր կհյուսի:

Իսկ թրթուրը տերեւին,  
Մորդ ցալն է երեւի:  
Մի սպանիր ոչ ճանճ, ոչ ցեց,  
Զի հեռու չէ Դատը մեծ:

Ով ձիուն մարտի մարզի,  
Բեւեռն հոգու չի անցնի:  
Շուն անտուն, այրու կատու  
Կերակրես՝ բարի ես դու:

Ամռան երգ երգող մոծակը  
Տարածում է Բամբասանքը:  
Թուլնը, որով օձը լիքն է՝  
Նախանձի ոտքի քրտինքն է:

Թուլնը, որ մեղվի կծածն է՝  
Արվեստի մարդու նախանձն է:  
Իշխանի, ճորտի հագուստը՝  
Ժլատի պարկի բորբոսն է:

A truth that's told with bad intent  
Beats all the lies you can invent.  
It is right it should be so;  
Man was made for joy and woe;

And when this we rightly know,  
Thro' the world we safely go,  
Joy and woe are woven fine,  
A clothing for the soul divine;

Under every grief and pine  
Runs a joy with silken twine.  
The babe is more than swaddling-bands;  
Throughout all these human lands

Tools were made, and born were hands,  
Every farmer understands. -  
Every tear from every eye  
Becomes a babe in Eternity;

This is caught by Females bright,  
And return'd to its own delight.  
The bleat, the bark, the bellow, and the roar  
Are waves that beat on Heaven's shore.

The babe that weeps the rod beneath  
Writes revenge in realms of death.  
The beggar's rags, fluttering in air,  
Does to rags the heavens tear.

The soldier, arm'd with sword and gun,  
Palsied strikes the summer's sun.  
The poor man's farthing is worth more  
Than all the gold on Afric's shore.

Չար մտքով ասված ճիշտ բանը  
Մեծագույն ստի նման է:  
Ճիշտ է դա. մարդու համար են  
Խնդությունը, վիշտն ու ցավը.

Երբ մենք դա հաստատ գիտենք,  
Կյանքով հանգիստ կքայլենք:  
Խինդն ու ցավը նուրբ հյուսված են.  
Հագուստ, որ տվեց աստվածը:

Ամեն ցավի, վշի տակ  
Ունես խինդի մի հյուսակ:  
Մանչն ավել է, քան բարուրը.  
Գործիքները՝ մուրճը, դուրը՝

Ձեռքն է ծնված պատրաստում.  
Դա բոլորն են հասկանում:  
Ամեն աչքի մի արցունք,  
Մանչ կդառնա Հավերժում:

Կույսն է Կնոջ այն որսում  
Երանությանն իր դարձնում:  
Բառաչոց, հաչոց, ոռնոցը՝  
Երկնային ալյաց ծփոցն է:

Ճիպոտից տնքող մանկանը  
Սոսկ մնաց՝ կանչել մահվանը:  
Ցնցոտին խեղճ աղքատի  
Երկինք կպատառտտի:

Թուր-թվանք կրող զինվորը  
Արեւ զնդակահարող է:  
Խեղճի փողն է ավելին  
Քան աֆրիկյան ողջ ոսկին:



One mite wrung from the labourer's hands  
 Shall buy and sell the miser's lands  
 Or, if protected from on high,  
 Does that whole nation sell and buy.

He who mocks the infant's faith  
 Shall be mock'd in Age and Death.  
 He who shall teach the child to doubt  
 The rotting grave shall ne'er get out.

He who respects the infant's faith  
 Triumphs over Hell and Death.  
 The child's toys and the old man's reasons  
 Are the fruits of the two seasons.

The questioner, who sits so sly,  
 Shall never know how to reply.  
 He who replies to words of Doubt  
 Doth put the light of knowledge out.

The strongest poison ever known  
 Came from Caesar's laurel crown.  
 Nought can deform the human race  
 Like to the armour's iron brace.

When gold and gems adorn the plough  
 To peaceful arts shall Envy bow.  
 A riddle, or the cricket's cry,  
 Is to Doubt a fit reply.

The emmet's inch and eagle's mile  
 Make lame Philosophy to smile.  
 He who doubts from what he sees  
 Will ne'er believe, do what you please.

Սեւագործի մեկ դրամը  
 Կծծիի հողից էլ թանկ է,  
 Իսկ թե վերից պաշտպանվի  
 Ամբողջ ազգը կծախվի:

Ով մանկան հավատ հեզնի  
 Դար՝ մինչ Մահ կհեզնվի:  
 Ով մանչի մեջ վախ լցնի՝  
 Նեխած շիրմից չի ելնի:

Ով մանկան հավատ հարգի  
 Դժոխք ու Մահ կհաղթի:  
 Մանկան խաղ եւ միտք ծերի՝  
 Բերք՝ տարվա երկու պահի:

Նենգությամբ հարցեր տվողը  
 Շատ տգետ պատասխանող է:  
 Ով տեղ կտա Կասկածին  
 Լույս գիտության դեն կածի:

Ամենաթունավորն այն թույնն է,  
 Որ Կեսարի դափնե թագում էր:  
 Մարդու ցեղի ողջ ցավն ու դարդը  
 Զրահների պողպատ թակարդն է:

Երբ ոսկով պճնեն գութանը  
 Կհեռանա նախանձանքը:  
 Ճոճոցը ծղրիդի  
 Պատասխանն է կասկածի:

Իմաստասերին տկար  
 Միշտ մնում է սոսկ ժպտալ:  
 Կասկածողը տեսածին  
 Զի հավատա ասածին:

If the Sun and Moon should doubt,  
They'd immediately go out.  
To be in a passion you good may do,  
But no good if a passion is in you.

The whore and gambler, by the state  
Licensed, build that nation's fate.  
The harlot's cry from street to street  
Shall weave Old England's winding-sheet

The winner's shout, the loser's curse,  
Dance before dead England's hearse.

Every night and every morn  
Some to misery are born.  
Every morn and every night  
Some are born to sweet delight.  
Some are born to sweet delight,  
Some are born to endless night.

We are led to believe a lie  
When we see not thro' the eye,  
Which was born in a night, to perish in a night,  
When the Soul slept in beams of light.

God appears, and God is Light,  
To those poor souls who dwell in Night;  
But does a Human Form display  
To those who dwell in realms of Day.

1803

Արեւ, Լուսին՝ կասկածեն  
Իսկույն եւեթ կսպառվեն:  
Կօզնի ձեզ կիրքն անել բարին,  
Բայց շիւնք կրքի գերին:

Անառակն ու խաղամոլը արտոնված են՝  
Ողջ երկրի ճակատագիրը վտանգված է:  
Թաղից թաղ ճիչերն անառակի  
Անգլաց երկիրը կտանի գերեզմանի:

Հաղթողի ճիչն, անեծքը պարտվողի  
Երկրի համար մխեր են դագաղի:

Ամեն գիշեր, օր ամեն,  
Ոմանք աղքատ կծնվեն:  
Ամեն օրում, գիշերում  
Ոմանք՝ կյանք են վայելում:  
Ոմանք՝ կյանք են վայելում,  
Ոմանք՝ խավար ճաշակում:

Ստին հակված ենք վստահել,  
Երբ որ աչքով մեր շենք տեսել,  
Որ ծնվել է մթում, որ կորչի այդ մթում,  
Երբ Հոգին վառ լույսի շողերում էր ննջում:

Աստված եկավ, Աստվածը Լույս է՝  
Հոգուն, որ մթի մեջ անհույս է.  
Բայց Մարդակերպ է երեւում  
Ու՝ Օրվա տանն է բնակվում:

HEATHER ALE

A Galloway Legend

From the bonny bells of heather  
 They brewed a drink long-syne,  
 Was sweeter far than honey,  
 Was stronger far than wine.  
 They brewed it and they drank it,  
 And lay in a blessed sround  
 For days and days together  
 In their dwellings underground.

There rose a king in Scotland,  
 A fell man to his foes,  
 He smote the Picts in battle,  
 He hunted them like roes.  
 Over miles of the red mountain  
 He hunted as they fled,  
 And strewed the dwarfish bodies  
 Of the dying and the dead.

Summer came in the country,  
 Red was the heather bell;  
 But the manner of the brewing  
 Was none alive to tell.  
 In graves that were like children's  
 On many a mountain head,  
 The Brewsters of the Heather  
 Lay numbered with the dead.

ՅՂԽՈՒ ՕՒԽ

Գալովեյյան առասպել

Յախու զանգակներից ալ  
 Եփեղ են թուրմ վաղուց,  
 Եւ քաղցր էր այն մեղրից էլ,  
 Եւ թունդ էր այն գինուց:  
 Եփեղ այն ու խմեղ են,  
 Թ՛զուկ մարդիկ կուճկում,  
 Խմեղ ու վայելեղ են  
 Իրենց խոր տներում:

Սքոթլանդացի արքան էլ,  
 Դաժան եկավ մի օր,  
 Եւ Պիկտերին հաղթեց նա,  
 Զարկեց ինչպես որսորդ:  
 Կարմիր լեռան փեշերը  
 Նա դաշտ որսի դարձրեց,  
 Զորերն ու անտառները  
 Սպանվածներով լցրեց:

Եկավ կրկին ամառը,  
 Շիկնեց ցախին կրկին  
 Բայց չգիտեր ոչ ոք էլ  
 Ինչպես եփեղ Օղին:  
 Շիրիմների շարքեր են  
 Լեռանց կատարներում.  
 Յախուց թուրմ եփողներ են  
 Հավերժ քնով ննջում:

The king in the red moorland  
Rode on a summer's day;  
And the bees hummed, and the curlews  
Cried beside the way.  
The king rode, and was angry,  
Black was his brow and pale,  
To rule in a land of heather  
And lack the Heather Ale.

It fortune'd that his vassals,  
Riding free on the heath,  
Came on a stone that was fallen  
And vermin hid beneath.  
Rudely plucked from their hiding,  
Never a word they spoke;  
A son and his aged father --  
Last of the dwarfish folk.

The king sat high on his charger,  
He looked on the little men;  
And the dwarfish and swarthy couple  
Looked at the king again.  
Down by the shore he had them;  
And there on the giddy brink --  
"I will give you life, ye vermin,  
For the secret of the drink."

There stood the son and father,  
And they looked high and low;  
The heather was red around them,  
The sea rumbled below.  
And up and spoke the father,  
Shrill was his voice to hear:  
"I have a word in private,  
A word for the royal ear.

Արքան մի օր անցնում է  
Ամռան դաշտով, զբոսնում.  
Բզգում են մեղունները,  
Արտույտն է դայլայլում:  
Զայրույթը խորացնում է  
Կնճիւրը ճակատի.  
«Յախու երկրին ես տեր եմ՝  
Չունեմ Յախու Օղի»:

Հանկարծ իր ծառաները,  
Զբոսներով կիրճում,  
Տեսնում են. թաքնված են  
Պիկտեր ժայռի ճեղքում:  
Եւ թաքստոցից հանում են,  
Հանձնում են արքային.  
Վերջին թզուկ պիկտերն են.  
Ծեր հայրն ու իր որդին:

Չիուն նստած դիմում է,  
Արքան թզուկներին,  
Եւ լուռ զույգ պատանդները  
Լսում են արքային:  
Ծովի եզրին կանգնած են՝  
Ժայռից նայում են ցած.  
«Զեզ կբաշխեմ ձեր կյանքը,  
Ձեր գաղտնիքի դիմաց»:

Սակայն որդին ու հայրը  
Անձայն էին մնում.  
Յախին շիկնում էր շուրջը,  
Եւ ծովն էր աղմկում:  
Հանկարծ խոսեց ծեր հայրը,  
Իր դողրոզուն ձայնով.  
«Քեզ ասելիք ունեմ ես,  
Սակայն գաղտնի կարգով».

"Life is dear to the aged,  
And honour a little thing;  
I would gladly sell the secret,"  
Quoth the Pict to the king.  
His voice was small as a sparrow's,  
And shrill and wonderful clear:  
"I would gladly sell my secret,  
Only my son I fear.

"For life is a little matter,  
And death is nought to the young;  
And I dare not sell my honour  
Under the eye of my son.  
Take him, O king, and bind him,  
And cast him far in the deep;  
And it's I will tell the secret  
That I have sworn to keep."

They took the son and bound him,  
Neck and heels in a thong,  
And a lad took him and swung him,  
And flung him far and strong,  
And the sea swallowed his body,  
Like that of a child of ten; --  
And there on the cliff stood the father,  
Last of the dwarfish men.

"True was the word I told you:  
Only my son I feared;  
For I doubt the sapling courage  
That goes without the beard.  
But now in vain is the torture,  
Fire shall never avail:  
Here dies in my bosom  
The secret of Heather Ale."

1880

«Երբ ծեր էս, կյանքը թանկ է,  
Պատիվը՝ փոքր բան.

Քեզ կծախեմ գաղտնիքն իմ,  
Բայց էս ունեմ պայման»:

Մի ճնճղուկի ծվոց էր,  
Իր ձայնը հիշեցնում.

«Ես քեզ կասեմ գաղտնիքը,  
Որդուց եմ վախենում»:

«Իր կյանքը մեծ մի բան չի,  
Մահն ինչ է տղային,

Սակայն ծախել պատիվս  
Տհաճ է իր աչքին:

Հիմա իրեն կապեք դուք,  
Եւ ծովը խոր նետեք,

Եւ ձեզ կասեմ գաղտնիքը,  
Որ միայն էս գիտեմ»:

Եւ կապեցին որդուն իր,  
Վզից ու ոտքերից,

Եւ նետեցին շրերը,  
Հենց մոտակա ժայռից,

Եւ ծովը, տասնամյա այդ  
Մարմինը կլանեց,

Եւ տեսնելով ամենը,  
Իր հայրն այսպես խոսեց.

«Իմ խոսքը ճշմարիտ էր  
Որդիս էր վախը իմ.

Հազիվ թե անմորուքը  
Դիմակայեք ցավին:

Հիմա տանջանքն անզոր է,  
Թող էս տրվեմ հրին.

Եւ կմեռնի գաղտնիքն իմ՝  
Ինձ հետ՝ Յախու Օղին»:

ԼԲ

If you can keep your head when all about you  
Are losing theirs and blaming it on you,  
If you can trust yourself when all men doubt you,  
But make allowance for their doubting too;  
If you can wait and not be tired by waiting,  
Or being lied about, don't deal in lies,  
Or being hated, don't give way to hating,  
And yet don't look too good, nor talk too wise:

If you can dream—and not make dreams your master;  
If you can think—and not make thoughts your aim;  
If you can meet with Triumph and Disaster  
And treat those two impostors just the same;  
If you can bear to hear the truth you've spoken  
Twisted by knaves to make a trap for fools,  
Or watch the things you gave your life to, broken,  
And stoop and build 'em up with worn-out tools:

If you can make one heap of all your winnings  
And risk it on one turn of pitch-and-toss,  
And lose, and start again at your beginnings  
And never breathe a word about your loss;  
If you can force your heart and nerve and sinew  
To serve your turn long after they are gone,  
And so hold on when there is nothing in you  
Except the Will which says to them: 'Hold on!'

If you can talk with crowds and keep your virtue,  
Or walk with Kings—nor lose the common touch,  
If neither foes nor loving friends can hurt you,  
If all men count with you, but none too much;  
If you can fill the unforgiving minute  
With sixty seconds' worth of distance run,  
Yours is the Earth and everything that's in it,  
And—which is more—you'll be a Man, my son!

1895

ԵԹ

Եթե հանգիստ ես, երբ քո շուրջ բոլորը  
Գլուխ կորցրած հենց քեզ են մեղադրում,  
Եթե վստահ ես, երբ քո մերձավորը,  
Վստահությամբ քեզ չի արժանացնում.  
Եթե սպասելը քեզ համար տանջանք չէ  
Իսկ թե խաբված ես, ինքդ չես ստի,  
Կամ չես էլ թաքցնի քո սխալանքը,  
Իսկ թե ատեն քեզ՝ ինքդ չես ատի.

Եթե տիրապետում ես երազանքդ,  
Եթե մտքերդ քեզ են ենթարկվում.  
Եթե գիտես եւ Փառքը եւ Փորձանքը՝  
Եւ որ երկուսն այդ քիչ են տարբերվում.  
Եթե քեզ կգսպես, երբ քո խոսքերը  
Խարդախը կփորձի նենգափոխել,  
Կամ տեսնելով գործիդ ավերակները  
Այն կսկսես սկզբից վերակերտել.

Եթե կարող ես այն ինչ դու շահել ես  
Ջառի հուշախն դնել ու վտանգել,  
Եւ այն կորցնել եւ գրոյից սկսել եւ  
Դրա մասին այլեւ չհիշել,  
Եթե կարող ես սիրտդ, նյարդներդ  
Կրկին ծառայեցնել նպատակիդ,  
Տոկալ, երբ դատարկել են քեզ դարդերդ,  
Եւ կամքն է կարգադրում լոկ. «Դիմացիր».

Եթե դու ամբոխի՛ հետ միշտ ազնիվ ես,  
Արքաների՛ հետ պարզությամբ լցված.  
Եթե ընկերն, օտարը չեն շեղի քեզ.  
Եթե հարգված ես, ոչ թե մեծարված.  
Եթե կարող ես անողոք ըոպեն էլ  
Լցնել արժեքավոր վաթսուն վայրկյան,  
Աշխարհը քոնն է եւ նրա գանձերը  
Եւ ավելին. դու Մարդ ես, բարեկամ:

# A PICT SONG

Rome never looks where she treads.  
 Always her heavy hooves fall  
 On our stomachs, our hearts or our  
 heads;  
 And Rome never heeds when we bawl.  
 Her sentries pass on—that is all,  
 And we gather behind them in hordes,  
 And plot to reconquer the Wall,  
 With only our tongues for our swords.

We are the Little Folk—we!  
 Too little to love or to hate.  
 Leave us alone and you'll see  
 How we can drag down the State!  
 We are the worm in the wood!  
 We are the rot at the root!  
 We are the taint in the blood!  
 We are the thorn in the foot!

Mistletoe killing an oak—  
 Rats gnawing cables in two—  
 Moths making holes in a cloak—  
 How they must love what they do!  
 Yes—and we Little Folk too,  
 We are busy as they—  
 Working our works out of view—  
 Watch, and you'll see it some day!

No indeed! We are not strong,  
 But we know Peoples that are.  
 Yes, and we'll guide them along  
 To smash and destroy you in War!  
 We shall be slaves just the same?  
 Yes, we have always been slaves,  
 But you—you will die of the shame,  
 And then we shall dance on your graves!

1906

# ՊԻԿՏԵՐԻ ԵՐԳ

Չի նայում Հռոմը թե ուր է  
 Իր բիրտ սմբակները դնում.  
 Ճգմում է մեր կուրծքը, գլուխը...  
 Մեր լացն էլ երբեք չի լսում:  
 Իսկ մենք նույնիսկ երբ ընդվզում ենք,  
 Մեր հողը իրենց է մնում,  
 Քանի որ մենք օգտագործում ենք,  
 Թրի փոխարեն սոսկ լեզուն:

Մենք՝ շատ փոքր մի ազգ,  
 Որ սիրենք կամ ատենք,  
 Բայց տեսեք զերդ մի հասակ,  
 Ձեզ ինչպես կկոտորենք:  
 Մենք որդերն ենք փայտի,  
 Մենք՝ փտախտն արմատի,  
 Մենք՝ վարակն արյունի,  
 Մենք՝ փշերը ոտքի:

Ճագոմը խեղդում է կաղիմը,  
 Առնետը պարանն է կրծում,  
 Վարակը ուտում է մարմինը,  
 Բոլորն իրենց գործն են սիրում:  
 Այո, մենք էլ փոքր մի ազգ ենք,  
 Մենք նույնպես մեր գործը ունենք,  
 Ծածուկ դրանով մենք զբաղված ենք,  
 Մի օր էլ դուք դա կտեսնե՞ք:

Ոչ, ճիշտ է՝ իրոք մենք ուժեղ չենք,  
 Բայց մեզ շատ ազգեր են լսում:  
 Նրանց ձեզ ընդդեմ կուղղորդենք մենք,  
 Ձեր վերջը կտանք մարտերում:  
 Կարծում եք, թե մենք սոսկ ստրուկ ենք,  
 Եւ ճիշտ է, ստրուկ էինք մենք,  
 Բայց դուք՝ ամոթից մեռնելու եք,  
 Եւ մենք ձեր շիրմին կպարենք:

THE WHITE GODDESS

All saints revile her, and all sober men  
Ruled by the God Apollo's golden mean -  
In scorn of which we sailed to find her  
In distant regions likeliest to hold her  
Whom we desired above all things to know,  
Sister of the mirage and echo.

It was a virtue not to stay,  
To go our headstrong and heroic way  
Seeking her out at the volcano's head,  
Among pack ice, or where the track had faded  
Beyond the cavern of the seven sleepers:  
Whose broad high brow was white as any leper's,  
Whose eyes were blue, with rowan-berry lips,  
With hair curled honey-coloured to white hips.

The sap of Spring in the young wood a-stir  
Will celebrate with green the Mother,  
And every song-bird shout awhile for her;  
But we are gifted, even in November  
Rawest of seasons, with so huge a sense  
Of her nakedly worn magnificence  
We forget cruelty and past betrayal,  
Headless of where the next bright bolt may fall.

1948

ՄԻՊԵՏԿԱ ԿԻՅՈՒԼԻՆ

Սրբերն ներան լուսող ու նաեւ մենք,  
Որ սուրբ ոսկի միջինը կպաշտենք՝  
Ծաղրանք թողած անցնում էինք դաժան՝  
Երկրով հեռու, որ գտնեինք ներան՝  
Ներան, ով որ բաղձանքն էր ամենքի՝  
Քրոջն արձագանքի ու տեսիլքի:

Եւ կամք էր պետք, եւ պետք էր միշտ տոկալ,  
Համառ հերոսական ուղով զնալ  
Ներան փնտրել հրաբխի գլխին,  
Ուր ձյուն էր ճամփեքին դիզում քամին,  
Այն կողմ յոթ քնածից այրաբնակ:  
Ում դեմքն էր բորոտի մաշկից ճերմակ,  
Աչքերը լուրթ, շուրթերն տալիս կարմրին,  
Գանգուռն էր մեղրագույն՝ սպիտակ ազդրին:

Հյուսիսով Գարնան անտառը պատանի՝  
Ջինջ կանաչով Մոր փառքը կտոնի,  
Եւ հավք ամեն իր երգը կձոնի.  
Իսկ շնորհը մերն է, նույնիսկ երբ հասնի  
Աշուն խոնավ իր զգացումով համայն  
Ներա մերկ մոգություն՝ անշուք անձայն,  
Մենք չենք հիշի ոչ դավ անցած, ոչ քեն,  
Անկախ, թե ուր շանթերը վայր կիջնեն:



She

She  
may be the face I can't forget  
a trace of pleasure or regret  
may be my treasure or the price I have to pay  
she  
may be the song that summer sings  
may be the chill that autumn brings  
may be a hundred different things  
within the measure of a day.

She  
may be the beauty or the beast  
may be the famine or the feast  
may turn each day into a heaven or a hell  
she  
may be the mirror of my dream  
a smile reflected in a stream  
she may not be what she may seem inside her shell

she  
who always seems so happy in a crowd  
whose eyes can be so private and so proud  
no-one's allowed to see them when they cry  
she  
may be the love that cannot hope to last  
may come to me from shadows of the past  
that I remember till the day I die

She  
may be the reason I survive  
the why and wherefore I'm alive  
the one I'll care for through the rough and rainy  
years  
me...  
I'll take her laughter and her tears  
and make them all my souvenirs  
for where she goes I've got to be  
the meaning of my life is  
she, she, she.

1948

ՆԵ

Նե  
գուցե այն դեմք է անմոռան,  
բերկրանքի հետք կամ ափսոսանք,  
գուցե այն գանձն է իմ կամ գին որ վճարեմ,  
նե

գուցե այն երգն է շոգ ամռան,  
գուցե սարսուռն է խոր աշնան,  
կամ այլ հարյուր բաներ է այն,  
որով ես օրս կշափեմ:

Նե  
գուցե բարի է կամ գազան  
գուցե գրկանք է կամ խրախճան  
գուցե դժոխք կամ դրախտ է օրը նե դարձնում  
նե

կամ հայելին է երազիս  
արտացոլանքն է ժպիտիս  
գուցե նե այն չէ, ինչ, ըստ իս, է իր խեցում:

Նե  
ով միշտ այնքան ցնծուն է ու անդարդ,  
աչքերն այնքան ներփակ են ու հպարտ,  
ոչ մեկը չի տեսնի լացող դրանք,  
նե

գուցե այն սերն է՝ անհավատալի,  
հասնող՝ ստվերի միջով խոր անցյալի,  
որ կհիշեմ մինչ օրը իմ մահվան:

Նե  
գուցե իմաստն է շնչելու  
եւ թե ինչու եմ ապրելու,  
մեկն, ում մասին պիտի հոգամ դժվար պահին  
ինձ

արցունքն ու խինդն իր կվերցնեմ,  
հուշանվեր ինձ կդարձնեմ,  
քանզի ուր նա է պիտ լինեմ,  
իմաստն է իմ կյանքի լոկ  
նե, նե, նե:

\* \* \*

Ein Fichtenbaum steht einsam  
Im Norden auf kahler Höh'.  
Ihn schläfert; mit weißer Decke  
Umhüllen ihn Eis und Schnee.

Er träumt von einer Palme,  
Die, fern im Morgenland,  
Einsam und schweigend trauert  
Auf brennender Felsenwand.

1822

\* \* \*

Հյուսիսում միայնակ եղենի է  
Կանգնած մերկ վեմին, տխրամած:  
Ննջում է. սպիտակ ծածկոցով է՝  
Ջյունով, սառույցով վերարկված:

Իսկ երազը իր արմավենին է,  
Շոգ հարավում հեռավոր,  
Որ ժայռին շիկացած տառապում է  
Անձայն, միայնակ ու մոլոր:

### WANDRERS NACHTLIED

Der du von dem Himmel bist,  
Alles Leid und Schmerzen stillest,  
Den, der doppelt elend ist,  
Doppelt mit Erquickung füllest;  
Ach, ich bin des Treibens müde!  
Was soll all der Schmerz und Lust?  
Süßer Friede,  
Komm, ach komm in meine Brust!

1776

### Ein Gleiches

Ueber allen Gipfeln  
Ist Ruh,  
In allen Wipfeln  
Spuerest du  
Kaum einen Hauch;  
Die Voegelein schweigen im Walde.  
Warte nur, balde  
Ruhest du auch.

1780

### ԹՎՓՂԱԿԱՆԻ ԳԵՇԵՐԵՐԳ

Դու, որ բարձր երկնքից,  
Խաղաղում ես խինդն ու ցավը  
Ով դժբախտ է կըրկնակի՝  
Կըրկնակի տալիս ես լավը.  
Ախ, ես աղմուկից հոգնե՛լ եմ:  
Ի՞նչ են ողջ այս վիշտ ու կիրք:  
Քաղցր անդորր շնչե՛լը,  
Եկ, ա՛խ, եկ՝ կրժքիս շնորհի՛ր:

### ՆՈՒՅՆՊԵՍ

Լեռների գագաթներն են  
Խաղաղ,  
Ծառերի կատարներն էլ.  
Մի խաղ  
Հովերի դու արդ չես նշմարի  
Անտառում թռչունները տես լուռ են  
Հնդամենը սպասիր, շուտով դու էլ  
Կհասնես անդորրի:

DER LESENDE

Ich las schon lang. Seit dieser Nachmittag,  
mit Regen rauschend, an den Fenstern lag.  
Vom Winde draußen hörte ich nichts mehr:  
mein Buch war schwer.

Ich sah ihm in die Blätter wie in Mienen,  
die dunkel werden von Nachdenklichkeit,  
und um mein Lesen staute sich die Zeit. -  
Auf einmal sind die Seiten überschienen,  
und statt der bangen Wortverworrenheit  
steht: Abend, Abend... überall auf ihnen.  
Ich schau noch nicht hinaus, und doch zerreißen  
die langen Zeilen, und die Worte rollen  
von ihren Fäden fort, wohin sie wollen...

Da weiß ich es: über den übervollen  
glänzenden Gärten sind die Himmel weit;  
die Sonne hat noch einmal kommen sollen. -  
Und jetzt wird Sommernacht, soweit man sieht:  
zu wenig Gruppen stellt sich das Verstreute,  
dunkel, auf langen Wegen, gehn die Leute,  
und seltsam weit, als ob es mehr bedeute,  
hört man das Wenige, das noch geschieht.

Und wenn ich jetzt vom Buch die Augen hebe,  
wird nichts befremdlich sein und alles groß.  
Dort draußen ist, was ich hier drinnen lebe,  
und hier und dort ist alles grenzenlos;  
nur dass ich mich noch mehr damit verwebe,  
wenn meine Blicke an die Dinge passen  
und an die ernste Einfachheit der Massen, -  
da wächst die Erde über sich hinaus.  
Den ganzen Himmel scheint sie zu umfassen:  
der erste Stern ist wie das letzte Haus.

1901

ԼՆԹԻՅՈՒՆ

Վաղուց էի կարդում: Կեսօրվանից՝  
անձրեւն երբ խշխշաց պատուհանից:  
Բայց չէր լսվում դրսում սուլող քամին.  
գիրքս էր խրթին:

Դեմքեր էին ասես, գրքի թերթերը  
որ մոռացվում, թռչնում են խորհելուց,  
եւ ժամը թանձրանում էր կարդալուց:  
Հանկարծ լուսաթաթախ եղան էջերը,  
եւ բառերի լարված շարքում անբեկ  
տեսա. գիշեր, գիշեր՝ ամենուրեք:

Դուրս չեմ նայում դեռեւս, բայց խզվում են  
տողերն երկար, բառերը գլորվում են  
նուրբ թելերից, ընկնում են ուր ուզում են...

Նյդժամ իսկույն ահա ես հասկանում եմ.  
Ֆայլող այգիներին՝ հեռու երկնից  
արեւն գետ մեկ անգամ վերադառնում է:  
Եւ կլինի ամռան գիշեր, չորսդիս.  
սակավ փոքրիկ խմբեր ցրված ճեմում են  
մթում՝ երկար ուղղով մարդիկ քայլում են  
եւ շատ հեռու՝ կարծես այդպես փորձում են,  
ունկնդրելու գեթ պահ ապագայից:

Եւ թե հիմա գրքից պոկեմ աչքերս  
ամեն ինչ կլինի հանգիստ, շքեղ:  
Իմ շուրջ ամբողջ տարածութիւնն անվերջ է.  
այստեղ՝ ներսում, նաեւ դրսում՝ այնտեղ:  
Սոսկ երբ, որ ներհյուսում եմ ինձ այնպես ես,  
որ հարմարվում է աչքս իրերին  
եւ պարզութիւնն մեծ զանգվածների,  
այդժամ երկիրն իրեն ընդարձակում է:  
Կարծես երկինքն ամբողջ կպարուրի.  
մի աստղ էլ՝ փողոցի վերջին տար տունն է:

# EINSAMKEIT

Die Einsamkeit ist wie ein Regen.  
 Sie steigt vom Meer den Abenden entgegen;  
 von Ebenen, die fern sind und entlegen,  
 geht sie zum Himmel, der sie immer hat.  
 Und erst vom Himmel fällt sie auf die Stadt.

Regnet hernieder in den Zwitterstunden,  
 wenn sich nach Morgen wenden alle Gassen  
 und wenn die Leiber, welche nichts gefunden,  
 enttäuscht und traurig von einander lassen;  
 und wenn die Menschen, die einander hassen,  
 in einem Bett zusammen schlafen müssen:

dann geht die Einsamkeit mit den Flüssen...

## ՄԵՆՈՒԹՅՈՒՆ

*Իսկ մենությունն ասես անձրեւ է:  
 Այն, ծովերից երեկոյան կելնի վերեւ եւ  
 դեպի դաշտեր՝ անհաս ու հեռակա.  
 գնում է այն երկինք, ուր միշտ էլ կա  
 Եւ երկնքից այն քաղաքին կգա:*

*Եւ անձրեւում է վաղ միջնաժամին  
 երբ փողոցներն առտու փոխվում են  
 եւ երբ որ սերը, ձեռնունայն ու դառնագին  
 հիասթափված է ու տխրում է  
 եւ երբ մարդիկ, որոնք իրար ատում են  
 միեւնույն մահճում պիտի քնեն պարտադրված.*

*այնժամ հորդում է մենությունը գետ դարձած...*



បញ្ជីឈ្មោះអ្នកប្រកួតប្រជែង

# ԻՆՎԵՍՏԵԿՆԻԿԱԿԱՆ ԲՆԱՆԱԿՆԵՐ

Ժողովածուում ընդգրկված գործերը ստեղծվել են սկսված 1980-ականների վերջից եւ բաժանվել են առանձին շարքերի հենց «Ճանաչողը» կազմելիս:

## Ժամանակներ

«Տարվա եղանակներ» կազմող չորս բանաստեղծություններից առաջինը եղել է «Զմեռը», որ գրվել էր դեռեւս 1991-ի հոկտեմբերի 27-ին՝ ինքնաբերաբար: Իսկ մյուս երեքը հավելվել են վերջերս՝ հատուկ այդ շարքը կազմելու համար: Ապա առաջացավ նաեւ «Օրվա պահերի» գաղափարը: Նույն տարվա դեկտեմբերի 31-ին գրվել է նաեւ «Նոր տարի»:

«Ցուտնի սոնետը» գրվել է, որպէս Արկադի եւ Բորիս Ստրուգացկիների «Դժվար է աստված լինել» վեպի հերոսներից մեկի՝ Յուլեն Ճշմարտախոսի սոնետի տարբերակ, որից վեպում բերված է միայն առաջին տողը: Ռուսաստանում հաճախ են անցկացվել այդ առաջին տողի հիման վրա Յուլենի սոնետի սեփական տարբերակներ գրելու մրցույթներ:

«Քո ծնունդը շնորհավոր»-ը գրվել է, որպէս ծիսական երգ նշելու համար մարդու կյանքի հանգուցային տարիքային կետերը՝ որոնք աստիճանաբար հեռանում են իրարից «ոսկի հատույթի» համամասնությամբ:

«Ցուտ ու մութ» եւ «Քաղաքով ցուտ Սարսափն է քայլում...» գործերը ստեղծվել են, ինչպէս պարզ է վերնագրից՝ «ցուրտ ու մութ» անունը ստացած տարիներին: Ներառվեցին «Ժամանակ» շարքում, թեեւ կարող էին ընդգրկվել նաեւ «Քաղաքացի» շարքում:

## Քնար

«Գինի»-ն գրվել էր «Գուրմեն» խոհարարական հանդեսի համար եւ հրատարակվել դրա շնորհանդեսային «գրողական» համարում, որպէս «Ճեմբարական»: Թերեւս,



չհաշված թարմեան. հայ կայքում հրապարակվածները, սա այս ժողովածուում  
ընդգրկվածներից միակ հրապարակված բանաստեղծությունն է:

«Տանգո»-ն գրվել է ռուսական ռոմանների տպավորություն տակ, բայց  
թարգմանություն չէ: Իսկ «Քարգամանություններ» բաժնում ներառված է նույն «Մի  
հեռացիր» արտահայտությունը պարունակող Նիկոլայ Զուբովի հայտնի ռոմանսը:

«Чайка»-ն եւ «Кольцо»-ն իմ սակավաթիվ ռուսերեն գործերից են:

«Հայ ֆնաերգուների ժողովածուն» գրվել է «Հայ դասական քնարերգություն»  
ժողովածուի տպավորություն տակ:

Sinfonia concertante-ն գրվել է Վ. Ա. Մոցարտի՝ ջութակի եւ ջութի համար «Sinfonia  
concertante»-ի Adagio-ից ներշնչված:

### Հայակենտրոնություն

«Հայակենտրոնություն» շարքը եւ նույնանուն բանաստեղծությունը շարունակում  
են իմ նույնանուն հոդվածի գաղափարն այն մասին, որ Հայոց հայրենիքը  
գտնվում է Հին աշխարհամասի երկրաչափական կենտրոնում, եւ դա է  
պայմանավորում մեր պատմության առանձնահատկությունները: Շարքում  
ընդգրկված են այս կամ այն կերպ հայոց օրրանի հետ կապված գործերը:

### «Գիլգամեշ» եւ «Րգեղա»

Սրանք ես տեղադրել եմ իմ բանաստեղծություններից հետո, բայց չեմ  
ներառել թարգմանությունների շարքում, քանի որ սրանք կանոնավոր  
թարգմանություններ չեն: Նախ՝ դրանք միջնորդավորված են. թարգմանված  
են ռուսերենից: Բացի այդ, «Գիլգամեշից» թարգմանված է միայն ջրհեղեղի  
տեսարանը՝ նշանավոր ՓԱ սալիկից, որին ես հավելել եմ սեփական նախաբան  
եւ վերջաբան, թույլ եմ տվել նաեւ որոշ հատուկ անունների հարմարեցում իմ  
խնդիրներին:

«Րգեղայից» թարգմանել եմ միայն երեք օրհներգ, կապված հայհնդարիական  
ընդհանրություն աստվածների հետ, այն է՝ Միհր-Մհերի, Մարութների, եւ  
Ինդրայի: Պետք է նշեմ, որ վերջինը ինձ մոտ ներկայացված է Արդինի անվամբ:  
Բանն այն է, որ սրանք ես թարգմանել եմ շատ երիտասարդ տարիքում, երբ  
հայտնվել էի մի հոդվածի տպավորություն տակ, ըստ որի «Րնդրա»-ն նույն  
«Արդինի» անունն է՝ շրջված: Այսօր ես նման կամայականություն գուցե թույլ  
չտայի, բայց դրանից բխում էր շատ հարմար հանգ, եւ այդպես էլ պահեցի.  
Ի վերջո, սա գիտական գործ չի: Ի դեպ, «Րգեղա» բառի տառադարձման  
մեջ փորձել եմ օգտագործել հայոց այբուբենի բոլոր հնարավորությունները՝  
առավելագույնս մոտիկ մնալու համար բնագրին:

## ԹԱՐԳՈՒՄԻ ԹՅՈՒՆՆԵՐ

Ձափածո թարգմանելը հեշտ է. միշտ կա արդարացում. ինչո՞ւ է հանգն անհաջող. պահել եմ չափը, ինչո՞ւ է խախտվել չափը. պահել եմ հանգը, ինչո՞ւ է խախտվել բովանդակությունը. կրկին՝ հանուն հանգի ու չափի: Բայց առաջնայինն, անշուշտ, չափն է. հանուն չափի կարելի է գոհել ամեն ինչ, ներատույժ՝ չափը: -)

Ձափածո թարգմանությունը ենթադրում է, առնվազն, բնագրի չափի պահպանում, ինչպես նաև՝ հանգի: Ցավոք հայերեն թարգմանություններում հաճախ խախտում են թե՛ մեկը, թե՛ մյուսը: Եւ հիմնավորվում է դա, հաճախ, հայոց լեզվի առանձնահատկություններով, որոնք հնարավորություն չեն տալիս պահպանելու բնագրի բանահյուսական բոլոր յուրահատկությունները: Նույնիսկ Պուշկինի «Ձմռան երեկոյի» կատարելություն համարվող թումանյանական թարգմանության մեջ խախտված է չափը: Անշուշտ, փոխարենը, Թումանյանը կարողացել է ստեղծել չքնաղ հայերեն բանաստեղծություն՝ պուշկինյան այդ գործի հիման վրա: Մինչդեռ սովորաբար հայ թարգմանիչները գոհաբերում են, թե՛ չափը, թե՛ հանգը, եւ թե՛ նույնիսկ բովանդակությունը, բայց դրա դիմաց ոչինչ չեն ստանում: Այս ժողովածուի մեջ ես ներառել եմ «Ձմռան երեկոյի» թարգմանության նաև իմ տարբերակը: Դա մրցակցությունից ելնելով չի արվել, այլ, պարզապես, պատկերելու համար, որ հայոց լեզվի հնարավորությունները շատ ավելի մեծ են, քան պնդում են ոմանք: Նույն վիճակում է Շեքսպիրի հնչյակների թարգմանությունը. մինչ այսօր ստեղծված 5 ամբողջական թարգմանություններից, եւ ոչ մեկում չափը չի պահվել:

Ես, բնավ, չեմ պնդում, թե բավական է պահել չափը, եւ կատարյալ կատարյալ թարգմանություն, բայց չափածոյի թարգմանություն առանց չափը պահելու՝ մեղմ ասած՝ տարօրինակ է: Ինչպես նաև, չեմ պնդում, թե բնագրերի բոլոր յուրահատկությունները՝ չափը, հանգը, ոճը, բովանդակությունը հավասարապես հեշտ է վերարտադրել հայերենով: Ամեն մի բանաստեղծության դեպքում չէ, որ հաջողվում է պահել չափը, բայց այդ դեպքում ավելի լավ է շխարհմանել առհասարակ, կամ թարգմանել արձակ. այն է՝ միայն բովանդակությունը: Երբեմն էլ չափը պահելու համար անհրաժեշտ է լինում գործածել ոչ այնքան

«գեղեցիկ» հնարքներ: Օրինակ, հայերենում քիչ են անշեշտ վերջնական կապահովելու հնարավորությունները եւ հաճախ անհրաժեշտ է լինում անել դա օժանդակ բայերի կամ շաղկապների միջոցով: Կամ գործածել շրջադասություն, կամ՝ «մակաբույծ» կամ հավելուրդային բառեր եւ քերականական ձևեր: Կամ հոդակապի գեղում եւ նորաբանությունների եւ հնաբանությունների, այդ թվում՝ գրաբարյան հոգնակիակերտի կիրառում: Բայց կարծում եմ չափի պահպանումը այնքան կարեւոր է, որ արժե դիմել նման հնարքների: Որպես իմ թարգմանչական սկզբունքների պատկերում եւ որոշեցի ներառնել նաեւ «Եւգենի Օնեգինի» առաջին հինգ տների թարգմանությունը. ամբողջ վեպի թարգմանությունը ինձ չի հաջողվում ծրագրել իմ կատարվելիք մյուս գործերի շարքում:

Մեկ այլ խնդիր է բնագրերի հրապարակման անհրաժեշտությունը: Մի կողմից, դա առավել բնորոշ է գիտական հրատարակություններին, սակայն, մյուս կողմից, նույնիսկ հայտնի ստեղծագործությունների բնագրերը ընթերցողը միշտ չէր որ հիշում է, բայց կարող ցանկանալ համեմատել դրանք թարգմանական տարբերակի հետ: Ես որոշեցի այդ խնդրին փոխզիջումային լուծում տալ. բնագրերը բերվում են, սակայն զգալիորեն մանր տառաչափով. ասես լուսանցքում գրված:

Այս ժողովածուում ընդգրկել եմ իմ գրեթե բոլոր շափածո թարգմանությունները, բացառությամբ՝ Սամուիլ Մարշակի, Կորնելյ Չուկովսկու մանկական մի քանի ոտանավորների, ինչպես նաեւ Լեոնիդ Ֆիլատովի հեքիաթը «Հրաձիգ թորոսի՝ ճարպիկ կտրիճի մասին», որոնք հրատարակվում են առանձին: Ու հատկապես՝ Ի. Շքապիրի «Հնչյակները»:

**Узник**

Պուշկինի այս գործի անվանումը ես թարգմանել եմ «Գերին»՝ ընկալման պարզության եւ երկարության համար, մինչդեռ իմաստով սա չի համապատասխանում բնագրին. այն ավելի ճիշտ համապատասխանում է ռուս. пленник-ին: Իսկ տառացի դա պետք է թարգմանվի «Կապյալը», քանի որ ռուս -уз-ին համապատասխանում է հայերեն -կապ արմատը: Կա նաեւ «Բանտվածը» տարբերակը. այն գուցե ավելի մոտ է բնագրին իմաստով, բայց ոչ ընկալմամբ:

**Пророк**

Վերջին տողում կիրառել եմ ռուսերեն глагол բառին նույնարժեք «բայ» բառը: Դա կարող է անսպասելի եւ սխալ թվալ, մինչդեռ այդ երկու բառերն ունեն միեւնույն արժեքը. եւ ոչ միայն քերականական խոսքի մասի իմաստով:

**Песня председателя (Пир во время чумы)**

«Փոքրիկ ողբերգությունների» մեջ ընդգրկված այս գործը Պուշկինը թարգմանել է շոտլանդացի բանաստեղծ Ջոն Իլլսոնի (John Wilson) «Փանտախտի Բաղաճը» (The City of the Plague) բանաստեղծական խաղի մի դրվագից: Իրականում սակայն՝

զգալիորեն վերամշակելով: Մասնավորապես Նախագահի երգը (Master of Revels. Song) միայն ընդհանուր գաղափարով է բխում բնագրից. Պուշկինի մոտ երգը շատ ավելի կարճ է: Բնագրում 16 տողանոց 5 տներ են (աա բբ գգ ... հանգով)՝ երգչախմբային քառատող կրկներգով, իսկ Պուշկինի մոտ 6 տողանոց 6 տներ են (աա բգ բգ հանգով)՝ առանց կրկներգի:

Ես թարգմանել եմ Պուշկինի տարբերակը. այն սեղմ է եւ համահունչ է մերօրյա դեպքերին: Որ գոնե հասկանանք, թե ինչ սոսկալի համաճարակների դեպքում էին քառասունք (quarantaine) հայտարարում: (Պուշկինը սա գրել է 1830 թ. Բոլդինոյում՝ խոլերայի մեծ համաճարակի տպավորության տակ գտնվելով):

**И скучно и грустно...**

Լերմոնտովի այս բանաստեղծության մեջ «некому руку подать» արտահայտությունը թարգմանել եմ, «չկա՛ մեկը ձեռքը մեկնիր», թեեւ, թերեւս, պիտի լիներ «չկա՛ մեկը, ում հնարավոր լինի ձեռք մեկնելը»:

**Под лаской плюшевого пледа**

Այս գործը թարգմանել եմ, քանի որ դրա հիման վրա գրված է Ա. Պետրովի փայլուն սիրերգը (Է. Ռյազանովի «Դաժան սիրերգ» շարժերիզից): Առաջին տարբերակում «сибирский кот»-ի տեղում գրել էի «վանա կատուն»:-))

**Смещение теней...**

Վադիմ Եգորովի այս բանաստեղծության կետադրությունը բերված է ըստ «Химия и жизнь», 1989, Հմ. 8:

**Дом хрустальный**

Այս գործի թարգմանությունն մեջ ինձ թույլ եմ տվել «տեղայնացում». «Ռաֆայելյան Մադոննա»-ն («Мадонна Рафаэлева») ինձ մոտ դարձել է «Մեծ տիրուհի Բաղդադի»: «Մադոննա»-ն հեշ չէր «նստում» հայերենում, իսկ «Տիրուհին» ինքն իրեն հայտնվեց եւ հաստատվեց: Հուսով եմ, կներվի:-))

**She**

Հերբերտ Կրեյմերի այս բանաստեղծությունը դարձել է Շարլ Ազնավուրի ամենահաջողակ երգերից մեկի հիմքը: Արդյո՞ք Ազնավուրը մասնակցել է բառերի ստեղծմանը, ինձ չհաջողվեց պարզել: Բնագրի կետադրությունը իմ գտած բոլոր տարբերակներում բացակայում է:

**Ein Fichtenbaum steht einsam**

Հայնրիխ Հայնեի այս փոքրիկ բանաստեղծությունը հայ ընթերցողին առավելապես հայտնի է ըստ Միխայիլ Լերմոնտովի ռուսերեն փայլուն թարգ-

մանուկիան, որը երբեմն ընկալում են որպես բնագիր: Ես փորձել եմ թարգմանել գերմաներեն բնագիրը, թեև, ուսերեն տարբերակը իր ազդեցությունը, երեւի, նույնպես թողել է:

### Wandrer's Nachtlied

Լերմոնտովի անվան հետ կապված եւս մի նմուշ. Վոլֆգանք Ֆոն Գյոթեի ամենահայտնի գործերից՝ զույգ բանաստեղծությունները, որից առաջինը՝ վերնագրված է Wandrer's Nachtlied՝ «Թափառականի գիշերերգ», իսկ երկրորդը՝ Ein gleiches՝ «Նույնպես»: Սովորաբար կոչվում են. Թափառականի առաջին եւ երկրորդ երգեր, կամ ըստ առաջին տողերի: Լերմոնտովը թարգմանել էր սրանցից երկրորդը, տալով դրան ուսերենին ավելի հարազատ եռատառ մեծասարի (choreus) չափ: Այս գործը հայտնի է Թումանյանի թարգմանությունում, թեև՝ հենց Լերմոնտովից: Այն թարգմանել է նաև Չարենցը, հավանաբար՝ բնագրից, սակայն նույնպես միայն երկրորդը: Ես որոշեցի թարգմանել երկուսն էլ՝ հատկապես, որ մեր «Թվայնացված» դարը հնարավորություն է տալիս անել դա հենց բնագրից: Բնագրի չափը շատ չեմ ձգտել պահել, քանի որ այն հարազատ չէ նաև հայերենին, բայց որքան հնարավոր է, փորձել եմ դրան հետևել:





Ժամկետ	3
Գարուն	4
Ամառ	5
Աշուն	6
Ձմեռ	7
Օրվա պահերը	8
Նոր տարի	9
Քո ծնունդը շնորհավոր	10
Յուռենի սոնետը	12
Ինչ որ դարում	13
Յուրա ու մութ	14
*** (Քաղաքով ցուրտ Սարսափն է քայլում...)	15
Վերջին անգամ	16
*** (Գիտեի, գալու է...)	17
Շարժանկար	18
*** (Ինչո՞ւ ես թողնում, որ ժամերը վայրի...)	20
*** (Թե աչքիդ աշխարհն անխախտ է...)	21
Բնավ	23
Գինի	24
Տանգո	25
Чайка	26
Кольцо	27
Ի-ին	28
Անցավ	29
Օրոր	30
*** (Ես կտխրեմ մենակ...)	31
Հայ քնարերգուիթյան ժողովածուն	32
Sinfonia concertante	33
Տաղավարը	34
Խաչմերուկին	35



ԷԼԻՍԵՆՍՈՒԹՅՈՒՆ.....	37
Հայկենարոնություն.....	38
Շրջեք քարտեզները .....	40
Մինչ պահը այն.....	41
Վեց շրջան .....	42
*** (Եղեռնը՝ սոսկ փաստաթղթեր չեն...).....	43
Հասնել .....	44
ԲԼՈՒՅԻՆ.....	47
*** («Achtung, achtung...»՝ ամեն առավոտ...) .....	48
*** (Զսարսափես, երբ քո աչքի առաջ...) .....	49
*** (ՅՕՅ-ի տղերքը շուտ թե ուշ...).....	50
*** (Դարձավ ընկերս աշխարհի քաղաքացի...).....	51
Գուցե մի օր.....	52
*** (Ինչ լավ է քաղքենի լինելը...).....	53
Զգոն եղեք.....	54
ԽՈՒՔ.....	57
*** (Շտապում եմ ես, ժամերն արագ ցնդում են...).....	58
*** (Ինչ ես, ասա, տառաստեղծ...).....	59
*** (Իսկ գուցե ես վերցնեմ գժվեմ...).....	60
Կոթող .....	61
*** (Վերջին հորվածն է, մտածում եմ...).....	62
*** (Զեր դրվատանքը ուշանում է...) .....	63
Մարգարե.....	64
*** (Արել եմ ամեն ինչ, որ շանիծեն ես...).....	66
ԺՈՒՏ.....	69
Շրջապտույտ.....	70
*** (Անձրեղ կաթել է...) .....	71
Ճաշացանկ .....	72
*** (Հեռու մեր Երկրից սեւ ու ցուրտ տիեզերքում...) .....	73
Հայագետ բալա .....	74
Դեղալա .....	75
Թագավարակը .....	76
Օղակաթիլային քառյակներ.....	77
Շառից հեռու .....	78
Ապրում ենք, որ բամբասենք.....	80
*** (Für Elise-ն արդեն ստեղծված է...).....	82
ԿԻՍ.....	83

ԳԻՆՎԱԿՆԵՆԸ .....	89
ԲԳԻՆՎԱԿՆԵՆԸ .....	101
I. 29. Արդիներին .....	102
I. 39. Մարուսներին.....	103
III. 59. Միհրին .....	104
ԸՊԳՊՆՈՒԹՅՈՒՆԵՐ .....	107
Գերին .....	108
Նախագահի երգը .....	109
***ին (Հիշում եմ հրաշք այն ակնթարթը...)	111
Զմուռն երեկոն.....	112
Միրելի եմ ձեզ.....	113
*** (Որքան հըրաշք հայտնություններ են...)	114
Մարգարե.....	115
Օլեգի վահանը .....	116
Եւգենիյ Օնեգին .....	117
Աղքատը.....	121
Առագաստը .....	122
*** (Մեն-մենակ ելնում եմ ճանապարհ ես...)	123
Զանձրույթ ու թախիժ է.....	124
Silentium! .....	125
Տերեւները .....	126
Կիկերոն .....	127
*** (Եւ չիք զգացմունք քո աչքերում...)	128
*** (Մի արթնացրու, մի արթնացրու...)	129
*** (Քեզ եմ կանչում, քեզ եմ կանչում...)	130
Մի՛ հեռոցիր .....	131
Իսկ դուք կկարողանայիք .....	132
Էլի պետերբուրգ .....	133
*** (Գիշեր, փողոց, լապտեր, դեղտուն եւ...)	134
*** (Շահանէ դու իմ, Շահանէ...)	135
Եզակի օրեր.....	136
*** (Ոչ ոք չի լինի ողջ տանը...)	137
Գեթսեմանի այգին .....	138
*** (Թավշյա ծածկոցն ու ջերմությունը...)	140
*** (Ինչ լավ է, որ ինձնով չեք դուք հիվանդ...)	141
*** (Գրում են մարդիկ եւ ջնջում է...)	142
Կառապանը.....	143
Silentium .....	145

*** (Այնքան մեծ է սիրո քո տենչանքը...)	146
*** (Սպասիր ինձ, եւ ես ետ կգամ...)	147
*** (Լսիր ինձ, սիրունիկս իմ)	149
Դու իմ սիրասուն	150
Տուն-թանգարան	151
Ռոտտերդամյան օրագիր	153
*** (Ձեն միաձուլվի երբեք ձմեռներն ու ամառները...)	154
*** (Ստվերների շեղում...միահյուսված ձեռքեր...)	155
Վարժեցրած առյուծների երգը	156
Ասք ծխոտած վագոնի մասին	158
Գիհենու ծառաթուփ	160
Գայլերի որսը	161
*** (Իսկ մոմերը հալչում են...)	163
Ես չեմ սիրում	164
Երգ ընկերոջ մասին	166
*** (Էր այդպես. ես սիրել եմ, տանջվել...)	168
Տուն բյուրեղյա	169
Ասք պայքարի մասին	170
Առլեկինո	173
*** (Լավագույն զբաղմունքն է թափառելը...)	175
Փյունիկն ու Տատրակը	176
Համլետի մենախոսությունը	179
Ներհայեցում ժէ	180
Վագրը	181
Անմեղուության գուշակություններ	184
Ցախու օդին	187
Եթե	190
Պրկտերի երգ	191
Սպիտակ դիցուհին	192
Նե	193
*** (Հյուսիսում միայնակ եղենի է...)	194
Թափառականի գիշերերգ	195
Ընթերցողը	196
Մենություն	197
<b>ԵՆՈՐԱԿՈՒԹՅՈՒՆԵՐ</b>	<b>199</b>
Բանաստեղծություններ	200
Թարգմանություններ	202
<b>ԻՎԱԿՈՒԹՅՈՒՆ</b>	<b>207</b>

ՀՏԴ 821.19-8 Թարումեան

ԳՄԴ 84(52)

Թ 330

*Թարումեան Ռուբէն*

Թ 330      *Խառնուրդ: Բանաստեղծութիւններ, թարգմանութիւններ / Ռ. Թարումեան.—  
Եր.: Հեղ. հրատ., 2022.— 212 էջ:*

*Ժողովածուի մէջ ներառւած են տարբեր տարիների, ոճերի, բնույթի  
բանաստեղծութիւններ, ռուս, անգլացի, գերմանացի բանաստեղծների գործերի  
թարգմանութիւններ, ինչպէս նաեւ որոշ պատմական հուշարձանների շափածո  
վերամշակումներ:*

ՀՏԴ 821.19-8 Թարումեան

ԳՄԴ 84(52)